

Էդգար Գ. Հովհաննիսյան

Պարմ. գիյր. թեկնածու

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏԱՏՈՒՄԸ

ԿԻՊՐՈՍՈՒՄ

Եվ Կիպրոսի հայոց թեմի վերակազմավորումը
1920–1930–ական թթ.*

Բանալի բառեր – Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Անթիլիաս, Կիպրոսի հայոց թեմ, Սահակ Բ Խաչապյան, Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյան, գաղթականություն, հայապահպանություն:

Մուտք

Կիպրոսի հայերի մասին հիշատակությունները սկսվում են դեռևս 6–7–րդ դարերից՝ բյուզանդական տիրապետության շրջանից¹: Կիպրոսի հետ հայերի առնչություններն ավելի մեծացան Կիլիկիայի հայոց թագավորության շրջանում: Այդ ժամանակներից սկսած՝ Կիպրոսում հաստատված հայերի թիվը սկսեց աճել: Արդեն 12–րդ դարի վերջերին՝ հայոց Գրիգոր Դ կաթողիկոսի օրոք, առաջին անգամ հիշատակվում է Կիպրոսի հայոց թեմը²: Հետագա դարերում Կիպրոսը դառնում է հայության կարևոր հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը: Այդ հարցում կարևոր դերակատարում է ունենում հայոց եկեղեցին: Պատմական տարբեր ժամանակներում Կիպրոսի հայոց թեմը գտնվել է հայոց եկեղեցու տարբեր նվիրապետական աթոռների ենթակայության տակ: Կիլիկիո թագավորության շրջանում այն անմիջապես ենթարկվում էր Ամենայն հայոց կաթողիկոսին, հետագայում, երբ ընդհանրական կաթողիկոսությունը հաստատվեց Ս. Էջմիածնում, այն հիմնականում գտնվել է Կիլիկիո կաթողիկոսության, իսկ 19–րդ դարի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.12.2020

1 Տես **Բակուրան**, Կիպրոս կղզի, «Տպարան Ազգ. Կրթարան-որբանոցի», Նիկոսիա, 1903, էջ 49-50, տես նաև **Ալաոյաձեան Ա.**, Կիպրոս կղզին, «Թեոլոգիկ, Ամենուն տարեցոյցը», 1927, Փարիզ, էջ 210-212, **Հ. Ալիմեան**, Հայ Կիպրոս, «Հանդես Ամսօրեայ», հայագիտական ուսումնաթերթ, N 6-8, հունիս-օգոստոս, 1937, էջ 378-381, **Alexander-Michael Hadjilyra**, The Armenians of Cyprus, «Kalaysjian Foundation», 2009, էջ 10.

2 Տես **Ալաոյաձեան Ա.**, նշվ. աշխ., էջ 211, տես նաև **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմություն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 283:

կեսերից երբեմն էլ Երուսաղեմի կամ Պոլսոս պատրիարքությունների հոգևոր-վարչական իրավասության ներքո³:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Կիպրոսի թեմի «վարչականօրէն կազմաւորումը»⁴ սկսվել է 19-րդ դարի կեսերից: Կիլիկիո Բարկեն Ա աթոռակից կաթողիկոսի բնորոշմամբ՝ «Պէտք է դիտել, որ Կիպրոսի հայութիւնը եկեղեցական վարչական կողմէն միշտ մնաց Կիլիկիոյ կաթողիկոսական աթոռին իրաւասութեան ներքեւ... Երուսաղեմի կամ Կ. Պոլսի պատրիարքութեանց հետ Կիպրոսի կապակցութիւնը ժամանակաւոր կարգադրութիւններ էին»⁵: Սահակ Բ-ն էլ իր 1924 թ. ապրիլի 8-ին հրատարակած կոնդակում գրում է. «Պատմական ցուցմունք եւ յիշատակարանք զանազան գրչութեանց դնին զԿիպրոս ի թիւս վիճակաց կաթողիկոսութեան Կիլիկիոյ: Այլ թէ զԻստրոլ եւ ո՞րպէս յանցելում դարու մերթ ընդ մերթ ընդ իրաւասութեամբ անցեալ իցէ պատրիարքութեանց Երուսաղեմի եւ Կ.Պոլսոյ, չեղեւ հնար ստուգութեան այսմ: Մինչդեռ ի վերջ կոյս ժև դարու եւ ի սկիզբն ժԹ դարու կաթողիկոսունք Կիլիկիոյ ընդ ժամանակս այցելեալ են կղզւոյն իբրեւ սեպհական վիճակի իւրեանց»⁶:

Կիլիկիայի հայաթափումից հետո անգամ մի պահ Սահակ կաթողիկոսը ցանկանում էր իր աթոռը հաստատել Կիպրոսում⁷: Սակայն հայ սովար գաղթականությանն ավելի մոտ կանգնելու հրամայականը Կիլիկիո աթոռի հերթական հանգրվանը դարձրեց Անթիլիասը:

1908 թ. Կիպրոսի թեմը Երուսաղեմի հայոց պատրիարքության ենթակայությունից անցնում է Կ. Պոլսի հայոց պատրիարքության իրավասության ներքո⁸: 1911-1914 թթ. Պոլսոս հայոց պատրիարքության և Կիլիկիո կաթողիկոսության միջև քննարկվում էր Կիպրոսի թեմը վերջինիս ենթակայությանը փոխանցելու հարցը⁹: Ի դեպ, Պոլսոս պատրիարքությունը ինքն էր խնդրել Կիլիկիո կաթողիկոսությանը ստանձնել կղզու հոգևոր իշխանությունը¹⁰: 1914 թ. հունիսի 27-ին Պոլսոս Ազգային կեդրոնական վարչության Խառը ժողովը, քննելով Կիպրոսի հովվության խնդիրը և ելնելով այն հանգամանքից, որ «Կիպրոսի աշխարհագրական դիրք մերձաւորութեամբ եւ հաղորդակցութեանց դիւրութեամբ կրնար ըստ պատշաճին հովուել տեղւոյն ժո-

3 Տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 79-81, տե՛ս նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», N 4, խմբագիր **Վարուճան արքեպիսկոպոս**, Սիկոսիա-Կիպրոս, «Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկիոյ կեանքի հիմնարկութեան», 2010, էջ 389, տե՛ս նաև **Չէպէլյան Ղ.**, Յիշատակարան կիպրահայ գաղութի, «Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ», Անթիլիաս-Լիբանան, 1955, էջ 69-70:

4 «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ թեմական կազմաւորումը», «Հրատարակութիւն Ազգային իշխանութեան, Կիպրոս», խմբագիր **Վարուճան արքեպիսկոպոս**, Սիկոսիա-Կիպրոս, 2011, էջ 24-54:

5 **Կիլիկիոյ Թաղութն Ա.**, Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Ս.Սակար, Անթիլիաս-Լիբանան, 1936, էջ 37-38:

6 «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ...», էջ 205:

7 Տե՛ս **Նոյնիսյան Բ.**, նշվ. աշխ., էջ 286, 290-291:

8 Տե՛ս «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ...», էջ 230-235:

9 Տե՛ս նոյն տեղում, էջ 169-171, 180-185:

10 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի...», էջ 96-97, 389-390, Տե՛ս **Նոյնիսյան Բ.**, նշվ. աշխ., էջ 286, 289:

ղովուրդը եւ հսկել ազգ. Հաստատութեանց բարոք մատակարարութեան վրայ»¹¹ որոշում է կղզու հովվությունը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը՝ միաժամանակ հանձնարարելով այսուհետ Կիպրոսի թաղական խորհրդին առաջնորդվել Կիլիկիո կաթողիկոսության հրահանգներով: Սրան հետևում է 1914 թ. հուլիսի 30-ի Պոլսո Ազգային կեդրոնական վարչության որոշումը Կիպրոսի թեմը Կիլիկիո կաթողիկոսությանը հանձնելու վերաբերյալ, որին իր համաձայնությունն էր տվել Երուսաղեմի հայոց պատրիարքությունը¹²: Փաստորեն, համապատասխան որոշումներով Կիպրոսի թեմը կրկին Կիլիկիո աթոռին հանձնման հարցը գրեթե վճռված էր: Սակայն բռնկված Առաջին աշխարհամարտը և դրան հաջորդած իրադարձությունները առժամանակ կանխեցին մեկնարկած գործընթացը և թույլ չտվեցին ամբողջությամբ լուծել հարցը, որն էլ առիթ հանդիսացավ 1920-ական թթ. սկզբին Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված տագնապին: Սակայն 1920-ական թվականների կեսերին ստեղծված նոր իրողությունների պայմաններում Կիպրոսի թեմն աստիճանաբար անցավ Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո: 1935 թ. մի տեղեկագրում, որում անդրադարձ է կատարվում Կիպրոսի թեմի պատկանելության հարցին, գրված է. «Կիպրոսը, իբր ժողովրդային հայության կենդրոն մը կարեւորութիւն մը կը ստանայ միայն 1921 թուականէն վերջ, երբ Կիլիկիոյ պարպումով 4000-ի մօտ մնայուն Հայ բնակչութիւն մը կը հաստատուի անդ, մեծամասնօրէն կիլիկեցի եւ բնական յեղաշրջումը տեղի կունենայ, այսինքն վերջնականապէս կը կապուի Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերուն եւ ենթակայ կըլլայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան Կենդր. Իշխանութեանց տնօրինութիւններուն»¹³: Կիպրոսի թեմի՝ Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ անցնելուց հետո վերջինս հսկայական ջանքեր գործադրեց Կիպրոսում հաստատված գաղթականության համայնքային կյանքի կազմակերպման և հայապահպանության ուղղությամբ:

1. Կիլիկիայի հայ գաղթականների հաստատումը Կիպրոսում

Բեռլինի վեհաժողովի նախօրյակին՝ 1878 թ. հունիսի 4-ին կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագրով Կիպրոս կղզին անցնում է Մեծ Բրիտանիայի ենթակայության տակ¹⁴: Այսուհետ կղզին ղեկավարվելու էր Բարձր կոմիսարի կողմից: Վերջինիս ղեկավարությամբ կղզում ստեղծվել էր նաև օրենսդիր մարմին¹⁵: Կղզու կենտրոնն էր Նիկոսիա քաղաքը:

11 **Չեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 71:

12 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,.....», էջ 229, տե՛ս նաև Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ... էջ 183-184:

13 «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ...», էջ 230-234:

14 Տե՛ս **Բակուրյան**, նշվ. աշխ., էջ 12-13:

15 Տե՛ս **Նույն տեղում**, էջ 14-15:

Արդեն 1914 թ. նոյեմբերի 5-ին Մեծ Բրիտանիան Կիպրոսը պաշտոնապես հայտարարում է իր տարածքի մաս:

Կիպրոսի հայության թիվը մինչև Հայոց ցեղասպանությունը մեծ չէր: 1879 թ. անցկացված մարդահամարի տվյալներով կղզում բնակվում էր ընդամենը 166 հայ¹⁶: Կիպրոսի հայերի թիվը անգլիական տիրապետության շրջանում աստիճանաբար սկսում է աճել: 1912 թ. Կիպրոսի թաղական խորհրդի տվյալներով կղզում բնակվում էր 480-600 հայ՝ «տեղացի թե՛ գաղթական»¹⁷: Կիլիկիահայերի հոսքը Կիպրոս սկսեց աճել դեռևս Ադանայի ջարդերից սկսած: Արխիվային վավերագրերի համաձայն՝ Ադանայի ջարդերից հետո Կիպրոսում էին հաստատվել մոտ 2000 ադանացիներ, սակայն նրանց մեծ մասը կարճ ժամանակ անց վերադառնում են հայրենի օջախներ կամ մեկնում այլ երկրներ¹⁸: Մինչ ցեղասպանությունը կղզում հաստատված հայերը համարվում էին, այսպես ասած, բնիկներ¹⁹: Կիլիկիայի վերջնական հայաթափումից հետո ամբողջությամբ փոխվեց պատկերը: 1921 թ. նոյեմբերի 8-ից սկսվում է հայ գաղթականների հոսքը Կիպրոս²⁰: Հաջորդ մի քանի տարիներին գաղթականների հոսքը շարունակվեց, և Կիլիկիայից ու Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերից տեղահանված հայության մի ստվար մասը՝ մոտ 8-10 հազար գաղթական, հանգրվանեց Կիպրոս կղզում²¹: Հայ գաղթականների հետ կղզի էին ժամանում նաև հույն գաղթականներ²²: 1920-ական թթ. սկզբներին քենալականների իրականացրած ջարդերից հետո էլ հայերի և հույների մի մասը փորձում էր փրկություն գտնել Կիպրոս կղզում²³: Սակայն ոչ բոլոր գաղթականները մշտական հաստատվեցին կղզում: Շատերը տարբեր պատճառներով աստիճանաբար տեղափոխվեցին այլ երկրներ: Այս ամենի հետևանքով, Բաբկեն կաթողիկոսի բնորոշմամբ, «գոյացաւ կղզւոյն մէջ նոր հայութիւն մը»²⁴:

1921 թ. անցկացված պաշտոնական մարդահամարի տվյալներով կղզու մոտ 330 հազար բնակիչներից²⁵ 1573-ը հայեր էին, որից առաքելական դավանանքի՝ 1197-ը: Կիպրոս գաղթողների մեջ կային նաև ոչ մեծ

16 Տե՛ս Alexander-Michael Hadjilyra, The Armenians of Cyprus, . . . 2009, էջ 20, տե՛ս նաև Ալօթյաճեան Ա., նշվ. Աշխ., էջ 226:

17 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի. . . .», էջ 388:

18 Տե՛ս «Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը. 1909 Լառնազա», խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա, 2010, էջ 11-112, տե՛ս նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», ««Ղար» հիմնադրամ», խմբագիր՝ Վարուժան արքեպիսկոպոս, Նիկոսիա-Կիպրոս, 2011, էջ 51:

19 Նշենք, որ Կիպրոսի, այսպես ասած, տեղացի կամ բնիկ հայերը ևս կղզում հաստատվել էին Կիլիկիայի և դրա շրջակայքի բնակավայրերից 150-200 տարի առաջ, այդ մասին տե՛ս Բակուրյան, նշվ. աշխ., էջ 82:

20 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի. . . .», էջ 57:

21 Տե՛ս «Արև», Գաիրիթ, 27 հունվարի, N 3340, 1930, էջ 1, տե՛ս նաև Alexander-Michael Hadjilyra, The Armenians of Cyprus, . . . , 2009, էջ 15, տե՛ս նաև Հայ սփյուռք հանրագիտարան, Եր., «Հայկական հանրագիտարան հրատարակչություն», 2003, էջ 343, «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի. . . .», էջ 77, «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», . . . , էջ 145-146:

22 Տե՛ս «Արև», Ալեքսանդրիա, 19 դեկտեմբերի, N 1167, 1922, էջ 1:

23 Տե՛ս նույն տեղում, 27 նոյեմբերի, N 1154, 1922, էջ 1:

24 Կիլիկիեան Բաբգէն Ա., Հայ Կիպրոս. . . , էջ 89:

25 Տե՛ս «Արաքս», Լառնաբա, 1 հունիսի, 1926, N 49-50, էջ 3:

թվով հայ կաթոլիկներ և բողոքականներ²⁶: Նշենք, որ Կիպրոսի հայոց թեմի տրամադրած վիճակագրական տվյալները կղզու հայության վերաբերյալ հիմնականում համապատասխանում են պաշտոնական մարդահամարի թվերին: Այսպես, Պետրոս սրբազանի կողմից Սահակ կաթողիկոսին ներկայացված տվյալների համաձայն՝ 1922 թ. սկզբի դրությամբ Կիպրոսում հաստատված գաղթականների թիվը հասնում էր 3500-ի²⁷: Վերջինիս հավաստմամբ կղզում ապաստանել էին նաև մոտ 400 հույն և մոտ երկու տասնյակից ավելի ասորի գաղթականներ²⁸:

1923 թ. հուլիսի 25-ին Ազգային պատվիրակությունից ստացված գրության համաձայն՝ վերջինս Պետրոս սրբազանից խնդրում է տրամադրել համապատասխան տվյալներ «Հայ որբերու եւ գաղթականներու մասին լիակատար վիճակագրական աշխատութեան» պատրաստման համար²⁹: Տվյալները պետք է ներկայացվեին «առանց կրօնքի խտրութեան»³⁰: Այսպես, ըստ այդ փաստաթղթի, 1923 թ. դրությամբ Կիպրոսում հաստատվել էր 3648 հայ³¹, որոնցից 1905-ը՝ Նիկոսիայում, 1512-ը՝ Լառնակայում, 83-ը՝ Ֆամագուստայում, 94-ը՝ Ամփանթոսում, 62-ը՝ Լիմասոլում, 12-ը՝ Կիրենտում: Սրանցից բնիկներ էին ընդամենը 319-ը, իսկ 300-ը Կիպրոսում հաստատվել էին 1896 թ. հետո, մնացած 3029-ը՝ 1921 թ. հետո³²:

Ըստ 1924 թ. օգոստոսին ֆրանսիական բարձր կոմիսարին Սահակ Բ-ի կողմից ներկայացված վիճակագրույցի՝ Կիպրոսի թեմի հայության թիվը նշվում է 4.100 անձ³³: 1926 թ. Պետրոս Սարաձյանը Կիպրոսի կառավարչի հետ հանդիպման ժամանակ կղզու հայ համայնքի թիվը նշում է 3500 անձ³⁴: Ա.Ակոբյանը 1927 թ. դրությամբ հիշատակում է կղզում ապրող 3640 հայերի մասին³⁵: 1931 թվականին, ըստ Կիպրոսի թեմի, կղզու հայ առաքելական համայնքի թիվը կազմել է 3471 անձ, որից 2035-ը բնակվում էր Նիկոսիայում³⁶: Սակայն 1931 թ. անցկացված պաշտոնական մարդահամարի տվյալներով հայերի թիվը հասնում էր 3617-ի, որից առաքելական եկեղեցու հետևորդներ էին 3377-ը³⁷, մնացածը հայ կաթոլիկներ և բողոքականներ էին: Այստեղ հերթական անգամ տեսնում ենք, որ պաշտոնական տվյալները քիչ են տարբերվում թեմի

26 Տե՛ս Alexander-Michael Hadjilyra, *The Armenians of Cyprus*,..., 2012, էջ 16:

27 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի, ...», էջ 58, 64:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

29 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,..., էջ 177:

30 Նույն տեղում, էջ 182:

31 Մեկ այլ տվյալով 1923 թ. կղզու հայերի թիվը հասնում է մոտ 5000-ի, Տե՛ս Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի, ..., էջ 84:

32 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,..., էջ 193, տե՛ս նաև Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ..., էջ 201:

33 Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 282:

34 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի, ...», էջ 190:

35 Տե՛ս Ապոյաձեան Ա., նշվ. աշխ., էջ 226:

36 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի, ...», էջ 444:

37 Տե՛ս Alexander-Michael Hadjilyra, *The Armenians of Cyprus*,..., 2009, էջ 20-22, տե՛ս նաև Alexander-Michael Hadjilyra, *The Armenians of Cyprus*, ..., 2012, էջ 16:

ներկայացրած տվյալներից: 1935 թ. կղզու հայության թիվը հասնում է 3819-ի³⁸: Մի քանի տարի անց հայերի թիվը շարունակում էր մնալ գրեթե նույնը³⁹:

Կղզում հաստատված հայերը հիմնականում կիլիկեցիներ էին, սակայն կային նաև գաղթականներ Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության զանազան հայաշատ բնակավայրերից⁴⁰: Այսպես, ըստ Պետրոս սրբազանի՝ 1922 թ. սկզբի դրությամբ Կիպրոսում հաստատված մոտ 3500 գաղթականները հիմնականում Ադանայից, Մեսինից և Տարսուսից էին, նրանց թվում կային նաև «...30ի չափ սսեցիներ, 15-20 հաճընցիներ, 30-40 մարաշցիներ, 200ի չափ զանազան տեղերէ»⁴¹: Հետագա տարիներին Կիպրոսում հաստատված գաղթականների մեջ կային նաև խարբերդցիներ, սեբաստացիներ, էրզրունցիներ, սասունցիներ, զեյթունցիներ և Արևմտյան Հայաստանի և հարակից տարածքների մի շարք այլ բնակավայրերից գաղթածներ⁴²: Կիպրահայերը, Ա.Ակպոյաձյանի վկայությամբ, Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի շուրջ 66 քաղաքներից էին⁴³:

Հարկ է նշել նաև, որ Կիպրոսում հաստատված շատ գաղթականներ, չգտնելով կյանքի համար նպաստավոր պայմաններ, արտագաղթում էին Ամերիկա և եվրոպական երկրներ, հաճախ նաև Սիրիա ու Լիբանան⁴⁴: Այդ տեղաշարժերով պայմանավորված՝ 1920-1930-ական թթ. Կիպրոսի հայկական համայնքի թիվը տատանվում էր 3500-4000-ի սահմաններում:

Նշենք նաև, որ թե՛ Կիլիկիո կաթողիկոսության և թե՛ Կիպրոսի թեմի կողմից աշխատանքներ էին տարվում կիլիկիահայության գաղթը արևմտյան երկրներ կանխելու նպատակով. «Շարունակ այդ ուղղությամբ քարոզում են հոս եւ ոչ միայն հարաւային Ամերիկա, այլ նոյն իսկ հիւսիսային Ամերիկա, Ֆրանսսա եւ Յունաստան գացողներուն ալ հակառակ բրորականտ ըրած են, սա համոզումով որ եթէ Սուրիոյ, Կիպրոսի մէջ 100 տարուան մէջ օտարանանք, յիշեալ երկրներուն մէջ 25 տարիէն արդէն ձուլուած պիտի ըլլանք»⁴⁵, - գրում էր Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին իր մտահոգությունների մասին: Այս տեղաշարժերով էին պայմանավորված հայության թվաքանակի տատանումները: 1940 թ. դրությամբ, օրինակ, Կիպրոսի առաքելական դավանանքի հայերի թիվը կազմում էր 2929 անձ կամ

38 Տես Alexander-Michael Hadjilyra, The Armenians of Cyprus, ..., 2009, էջ 21.

39 Տես «Հասկ», օգոստոս-հոկտեմբեր, 1944, N 8-9-10, էջ 139, տես նաև Կիլիկիոյան Բարզէն Ա., Հայ Կիպրոս..., էջ 90-91:

40 Տես Կիլիկիոյան Բարզէն Ա., Հայ Կիպրոս..., էջ 91:

41 Տես «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 58, 64:

42 Տես նոյն տեղում, էջ 444:

43 Տես Ակպոյաձեան Ա., նշվ. աշխ., էջ 226:

44 Տես «Արաքս», Լառնաքա, 16 յուլիսի, 1924, N 5, էջ 5, 16 օգոստոսի, 1925, N 31, էջ 4, տես նաև «Արև», Գահիրե, 27 հունվարի, N 3340, 1930, էջ 1, «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 190, «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,..., էջ 241:

45 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 262:

715 ընտանիք⁴⁶: Բայց արդեն 1943 թ. վերջերի դրությամբ, Կիպրոսի թեմի տվյալներով, կղզում ապրում էր 3843 հայ⁴⁷:

Նշենք նաև, որ հետագայում՝ Մեծ հայրենադարձության տարիներին և 1960-ական թվականներին, հայրենադարձվում են միայն մի քանի հարյուր կիպրահայեր⁴⁸:

Կիպրոսի հայերը հիմնականում արհեստավորներ էին և առևտրականներ, կային նաև ճանաչված լուսանկարիչներ, բժիշկներ, ատամնաբույժներ, փաստաբաններ, ինչպես նաև պետական պաշտոնյաներ⁴⁹, գործարանատերեր և ագարակատերեր⁵⁰: Օրինակ հետաքրքիր էր, որ Կիպրոսի անգլիական կուսակալության դիվանի թուրքերենի թարգմանչի պաշտոնը միշտ տրվում էր հայերին, որը դժգոհության տեղիք էր տալիս կղզու թուրքերին⁵¹: Չնայած Կիպրոսում կային սոցիալապես անապահով վիճակում գտնվող գաղթականներ, սակայն «Մուրացիի գոյություն չունի»⁵², - փաստում է Ալպոյաձյանը:

Հասարակ կյիլիկեցիների հետ կղզում էին հաստատվում նաև հոգևորականներ, համայնքային գործիչներ, ուսուցիչներ և այլն: Վերջիններիս թվում էր նաև Հաճնի նախկին հոգևոր առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաձյանը: Նա 1920 թ. փետրվարին Հաճնից մեկնել էր Ադանա՝ ֆրանսիացիներից հաճնցիների համար օգնություն խնդրելու նպատակով: Սակայն երբ պարզվում է, որ ֆրանսիացիները չեն պատրաստվում օգնություն ցուցաբերել հաճնցիներին և տեսնելով, որ այլևս իր Ադանայում մնալը որևէ օգուտ չէր կարող բերել «Հաճնի հայրենակցական միութեան գիտություն» Պետրոս Սարաձյանը 1920 թ. ապրիլի 12-ին ժամանում է Կիպրոս՝ սպասելով Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի հրահանգներին իր հետագա անելիքների հետ կապված: Շուտով կաթողիկոսը Պետրոս սրբազանին հրահանգում է մնալ Կիպրոսում⁵³: Վերջինս, ըստ էության, ստանձնում է տեղի հոգևոր առաջնորդությունը: Ըստ Պետրոս սրբազանի՝ իր Կիպրոս ժամանելու գլխավոր նպատակն էր՝ այստեղից «զանազան տեղեր հեռագիրներով կացությունը պարզելի եւ օգնություն խնդրելի, ոչ թէ դրամական, այլ զինուորական...»⁵⁴: Պետրոս սրբազանը նախ և առաջ նամակներով դիմում է, իր խոսքով, «քսաներորդ դարու մարդկության ներկայացուցիչներուն»՝ Փարիզ, Լոնդոն, Վաշինգտոն, Հռոմ և այլուր՝ բարձրացնելով տարագիր հայությանն աջակցության հարցը: Սակայն

46 Տես «Հասկ», մարտ-ապրիլ, 1941, N 3-4 էջ 55, մայիս-հունիս, 1941, N 5-6, էջ 80:

47 Տես նույն տեղում, 1944, N 8-9-10, էջ 139:

48 Տես **Մելիքսեթյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, «Երևանի համալսարանի հրատարակչություն», Եր., 1985, էջ 200-201, 299:

49 Տես «Արաքս», Լառնաքա, 31 մայիսի, N 2, էջ 4, 1924, 16 հունիսի, 1924, N 3, էջ 5, սեպտեմբեր-դեկտեմբեր, 1927, N 68, էջ 4, տես նաև **Բակուրյան**, նշվ. աշխ., էջ 88-90, **Ալպոյաձյան Ա.**, նշվ. աշխ., էջ 239, **Կիլիկիոցի Բարզեհ Ա.**, Հայ Կիպրոս..., էջ 258, **Alexander-Michael Hadjilyra**, The Armenians of Cyprus, ... , 2009, էջ 15.

50 Տես «Թղթակցություն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձյանի»,...», էջ 444:

51 Տես «Արև», Փահիրտ, 2 փետրվարի, N 2730, 1928, էջ 2:

52 **Ալպոյաձյան Ա.**, նշվ. աշխ., էջ 226:

53 Տես «Թղթակցություն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձյանի»,...», էջ 23-28, 94:

54 «Տարագրություն, որբեր, Մեղանեան հաստատություն»,...», էջ 63:

չստանալով որևէ արձագանք ու հերթական անգամ բախվելով դառը իրականությանը՝ նա հիասթափված գրում է. «...մենք՝ հազար անգամ փորձուած եւ դարձեալ փորձառու չէղոքս բաներ մը կը յուսանք անոնցմէ, որոնց քով հեռաւոր կենդանիները աւելի հոգածութեան առարկայ են քան հայ կոչուած մարդկութեան թշուառ բեկորները»⁵⁵: Պետրոս Սարաձյանը նամակներ է հղում նաև Ազգային պատվիրակությանը և հայկական շրջանակներին՝ նկարագրելով կիլիկիահայության օրհասական վիճակը և փորձելով վերջիններին ուշադրությունը հրավիրել ստեղծված վիճակի վրա⁵⁶:

Պետրոս սրբազանը կարևոր դերակատարում է ունենում գաղթական կիլիկեցիների՝ Կիպրոսում հաստատման ընթացքում առաջ եկած խնդիրների լուծման և վերջիններիս համայնքային կյանքի կազմակերպման գործում: Հատկապես գնահատելի են Պետրոս սրբազանի մեծ ջանքերը Կիպրոս ժամանող գաղթականների համար անգլիական իշխանություններից կղզում հաստատվելու թույլտվություն ստանալու ուղղությամբ: Կիպրոսի անգլիական կառավարությունը սահմանափակումներ էր դրել կղզի ժամանող հայ գաղթականների թվաքանակի վրա: 1921 թ. վերջին Պետրոս Սարաձյանը Գ. Նորատունկյանին գրած նամակում նշում է. «Կիպրական կառավարութիւնը հազար աղաչանքով հաճեցաւ միմիայն 3000 հայեր ընդունիլը արտօնել, ցարդ ունեցանք 2700 գաղթականներ, բացի հիներէն, որ անցեալ տարի եկած էին եւ հազիւ 300 անձ կը հաշուուին»⁵⁷: Տեղի կառավարությունը գաղթականներին չէր տրամադրում նաև որևէ էական նյութական աջակցություն: Ընդհակառակը, Պետրոս Սարաձյանը կառավարության մոտ հանդես էր գալիս որպես երաշխավոր, որ ժամանող գաղթականները «նիւթապէս ոռել մէկուն նեղութիւն»⁵⁸ չեն պատճառի: Եվ հիրավի, հայ գաղթականները տեղի ազգային իշխանությունների և հայկական կառույցների, ինչպես նաև իրենց աշխատասիրության հաշվին հոգս չդարձան տեղական իշխանությունների համար: Այդ պատճառով էլ, թեև ոչ մեծ թվով, բայց այնուամենայնիվ անգլիական իշխանությունները, ի տարբերություն հույների, արտոնում էին հայ գաղթականների մուտքը կղզի⁵⁹: Չէր բացառվում, որ առկա սահմանափակումների չլինելու դեպքում Կիպրոս հանգրվանող հայ գաղթականների թիվն ավելի մեծ կլիներ:

Կիպրոս ժամանած գաղթականները մուտքի թույլտվություն էին ստանում սահմանված պարտադիր կարանտինն անցնելուց հետո⁶⁰: Պետրոս սրբազանին հաջողվում է համոզել տեղի անգլիացի կուսակալին հրաժարվել ամեն փախստականի համար պահանջվող 25 անգլիական ոսկու ե-

55 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի,....», էջ 57:

56 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,... էջ 55-73:

57 Նոյն տեղում, էջ 118:

58 Նոյն տեղում, էջ 118:

59 Տե՛ս նոյն տեղում, էջ 146:

60 Տե՛ս «Արև», Ալեքսանդրիա, 19 դեկտեմբերի, N 1167, 1922, էջ 1:

րաշխավորությունից, որը շատ ծանր պայման էր անվճարունակ գաղթականների համար՝ փոխարենը երեք տարեկանից բարձր յուրաքանչյուր անձի համար սահմանելով ընդամենը 2 շիլինգ գումար երկու շաբաթ տևողությամբ կարանտի (կարանտինի – է. Հ.) համար, ինչպես նաև մաքս՝ իրենց հետ բերած ապրանքների համար⁶¹: Այնուամենայնիվ, ունեզրկված գաղթականների համար դժվար էր այդ գումարը վճարելը, որն էլ հաճախ ստանձնում էին ազգային կառույցները: Պետք է նշել, սակայն, որ կղզում հաստատվող կիլիկեցի գաղթականներից ոչ բոլորն էին աղքատ, նրանց մեջ կային նաև հարուստ ընտանիքների ներկայացուցիչներ:

Բացի դրանից՝ անգլիական իշխանությունների պահանջով հայկական ազգային մարմինները ժամանող գաղթականների համար պետք է տրամադրեին երաշխավորություն⁶²: Դա տրամադրվում էր Սարաձյան սրբազանի և Նիկոսիայի թաղական խորհրդի կողմից: Անգլիացիները պայման էին դրել նաև, որ գաղթականների համար որևէ նպաստ, օգնություն կամ էլ գործ չպահանջվի կառավարությունից⁶³: Բայց, այնուամենայնիվ, դրանով հանդերձ ոչ բոլոր գաղթականներին էր թույլատրվում մտնել կղզի. «...իտալական փօստի նաւով եկողները, անգլիական բեռնանաւով հասնողները կընդունուէին, իսկ յունական, ֆրանսական նաւով ժամանողները կը մերժուէին...»⁶⁴, – գրում է Պետրոս սրբազանը:

Իր նախկին հոտի՝ Կիպրոսում հայտնված բեկորները նաև Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի ուշադրության կենտրոնում էին: Նա պարբերաբար Պետրոս սրբազանից հետաքրքրվում էր ժամանողների վիճակով՝ խնդրելով հայտնել հստակ վիճակագրական տվյալներ վերջիններիս վերաբերյալ⁶⁵: «...Քանի՞ է թիւերնին, տուն տեղ գտա՞ն, հաց չունեցողները ի՞նչ կընեն»⁶⁶, – հետաքրքրվում էր կաթողիկոսը իր հերթական նամակներից մեկում: Կաթողիկոսը տեղում իրավիճակը պարզելու համար 1921 թ. Կիպրոս է ուղարկում նաև Եղիշե Եպիսկոպոս Կարոյանին, որը 1923 թ. նշանակվում է Լառնակայի թաղական խորհրդի նախագահի պաշտոնին⁶⁷, որը վարում է շուրջ ութ տարի՝ մինչև Լիբանանի նորակազմ թեմի առաջնորդ դառնալը: Վերջինս ևս կարևոր աշխատանք է կատարում կղզում հաստատված գաղթականների խնդիրների լուծման ուղղությամբ⁶⁸:

61 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի,....», էջ 57-58, տե՛ս նաև «Արև», Գահիրէ, 19 դեկտեմբերի, N 1167, 1922, էջ 1:

62 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»..., էջ 70-71:

63 Տե՛ս «Արև», Գահիրէ, 19 դեկտեմբերի, N 1167, 1922, էջ 1:

64 Նույն տեղում, էջ 58:

65 Տե՛ս նույն տեղում, էջ 68, 281:

66 Նույն տեղում, էջ 54:

67 Տե՛ս նույն տեղում, էջ 54, տե՛ս նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»..., 2011, էջ 159:

68 Տե՛ս «Արև», Ալեքսանդրիա, 19 դեկտեմբերի, N 1167, 1922, էջ 1:

Կղզում հաստատված հայ գաղթականները երկար տարիներ չունեին քաղաքացիություն⁶⁹, որն ավելի էր դժվարացնում նրանց կյանքի պայմաններն ու գործունեության հնարավորությունները: Խնդիրը լուծելու նպատակով 1926 թ. դեկտեմբերին Պետրոս Սարաճյանը հանդիպում է Կիպրոսի նորանշանակ անգլիացի կառավարիչ Ռոնալդ Սթորսին⁷⁰ և հերթական անգամ բարձրացնում հայ գաղթականներին անգլիական քաղաքացիություն և անձնագիր տրամադրելու հարցը: Դրանից հինգ տարի առաջ այդ հարցը կրկին բարձրացվել էր և մերժվել անգլիացիների կողմից⁷¹: Նշենք, որ մինչև 1914 թ. նոյեմբերի 5-ը Կիպրոսում հաստատված հայերը համարվում էին անգլիական հպատակներ, իսկ դրանից հետո հաստատվածները՝ ոչ: Կիպրոսի հայոց թեմի ջանքերը այդ ուղղությամբ տարիներով ձգձգվում էին: Խնդրի լուծման համար Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին առաջարկում էր դիմել Մեծ Բրիտանիայի Գաղութային նախարարությանը, քանի որ տեղական իշխանություններին արված դիմումները դրական արձագանքի չէին արժանանում⁷²:

Հայերի քաղաքացիության հարցը կարգավորվում է միայն 1920-ական թթ. վերջերին: Այն հայը, որը 5 տարի բնակվում էր Կիպրոսում կարող էր քաղաքացի դառնալ, եթե իրեն «4 անգլիացի կը ճանչնայ եւ իր մասին լաւ վկայութիւն կու տայ» և միաժամանակ՝ ի վիճակի կլինի վճարել 10 անգլիական ոսկի⁷³: Ահա այս պայմանով էր, որ կիպրահայերը կարող էին ստանալ բրիտանական քաղաքացիություն:

Այսպիսով՝ Կիլիկիայի հայաթափման հետևանքով շուրջ 3-4 հազար հայեր հաստատվեցին Կիպրոս կղզում: Մրանով ամբողջությամբ փոխվեց կղզու հայկական համայնքի պատկերը: Հայ գաղթականների տեղավորման և այդ ընթացքում առաջացած հիմնական խնդիրների լուծման առաջադրանքն իրենց վրա էին վերցրել Կիպրոսի հայոց թեմն ու տեղական համայնքային կառույցները: Ուստի 1920-ական թթ. սկզբից, ըստ էության, մեկնարկում է Կիպրոսի հայկական համայնքի պատմության նոր շրջանը:

2. Կիպրոսի հայոց թեմի վերակազմավորումը և անցումը Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ

Կիպրոսի հայության համայնքային կյանքի կազմակերպման հարցում խիստ կարևոր էր տեղի հայոց թեմի վերակազմավորումը և կարգավիճակի հստակեցումը՝ ենթակայության տեսակետից: Ինչպես վերը նշվեց, Կիպրոսի

69 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 223:

70 **Ռոնալդ Սթորսը** Կիպրոսի կուսակալի պաշտոնում նշանակվել էր 1926 թ. օգոստոսին փոխարինելով Մելքոն Գառնիոլային: Սթորսը մինչ այդ պաշտոնավարել էր Պաղեստինում որպէս Երուսաղեմի կառավարիչ և լավ էր ճանաչում թե՛ հայերին և թե՛ հայոց եկեղեցին, տե՛ս «Արաքս», Լառնաքա, 16 օգոստոսի, 1926, N 54-55, էջ 1, սեպտեմբեր, 1926, N 56, էջ 1:

71 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 190:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 221:

73 Տե՛ս նույն տեղում, էջ 282:

հայոց թեմը պատմական տարբեր ժամանակաշրջաններում ենթարկվել է հայ եկեղեցու տարբեր նվիրապետական աթոռներին: Արևմտահայոց Ազգային սահմանադրության հաստատումից հետո Կիպրոսի թեմը գտնվում էր Պոլսոց հայոց պատրիարքության իրավասության ներքո: 1909 թ. Ադանայի ջարդերից և 1921 թ. Կիլիկիայի պարպումից հետո մի քանի հազար կիլիկիահայեր հաստատվեցին Կիպրոսում: Վերջիններս, նախկինում գտնվելով Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր իշխանության ներքո, նոր պայմաններում ևս ցանկություն հայտնեցին պահպանելու այդ կարգավիճակը: Արդեն նշվել է, որ 1920-ական թթ. սկզբներին Կիպրոսի թեմի շուրջ անորոշ վիճակ էր ստեղծվել: Կիպրոսում հաստատված կիլիկեցիները աստիճանաբար սկսեցին բարձրաձայնել կղզու հայոց հոգևոր թեմի պատկանելության հարցը: Պոլսոց պատրիարքությունը ըստ էության պաշտոնապես դեմ չէր թեմի հանձնմանը Կիլիկիո կաթողիկոսությանը: Սակայն 1920-ական թթ. տեղի ունեցած մի շարք իրադարձություններ լարված իրավիճակ ստեղծեցին Կիպրոսի թեմի շուրջ:

Կիպրոսի թեմը Կիլիկիո աթոռի իրավասության տակ դնելու հարցում կարևոր դերակատարում ունեցավ Պետրոս եպիսկոպոս Սարաձյանը, որը Կիպրոսում հաստատվելուց ի վեր, ըստ էության, հանդիսանում էր տեղի առաջնորդական փոխանորդը: Քանի որ այս շրջանում Կիլիկիո կաթողիկոսությունը չուներ բավարար թվով բարձրաստիճան հոգևորականներ, 1923 թ. ապրիլին Սահակ Բ-ն մի պահ ցանկանում էր Պետրոս Սարաձյանին նշանակել Հալեպի թեմի առաջնորդ, որտեղ այդ ժամանակ խառը իրավիճակ էր առաջացել: Սարաձյան սրբազանին հրավիրելով Սիրիա՝ կաթողիկոսը ցանկանում էր տեղում ամրապնդել Կիլիկիո աթոռի դիրքերը: Այդ առթիվ «Արաքսը» գրում է. «Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսը Սուրիոյ ներկայ կացութիւնը նկատի առնելով առ ի դարմանս ստիպողաբար իր քով կը կանչէ Կիպրոսի առաջնորդը»⁷⁴: Թեև սկզբում սրբազանը համաձայնում է առաջարկին⁷⁵, սակայն հետագայում ցանկություն է հայտնում ծառայությունը շարունակելու Կիպրոսում⁷⁶:

Կիպրոսի թեմի պատկանելության հարցի վերջնական լուծման խնդրում խիստ կարևոր էր նոր պայմաններում կղզու ազգային իշխանությունների վերակազմավորումը: Կիպրոսի հայկական համայնքը գրեթե միշտ իր գործերը ղեկավարել է ընտրովի Թաղական խորհրդի միջոցով⁷⁷: «Կիպրոս Թաղական խորհուրդը մը ունի, որ իր վրայ առած է կիպրահայոց գործերուն վարչութիւնը»,– գրում էին Կիպրոսի թաղական խորհրդի անդամները Սահակ Բ-ին 1924 թվականին, սակայն. «...կիպրահայ ամէն շարժում եւ ոգևո-

74 «Արաքս», Լառնաքա, 2 նոյեմբերի, 1925, N 36, էջ 2:

75 Տե՛ս նույն տեղում, էջ 82, 86:

76 Տե՛ս նույն տեղում, էջ 83, 105-107:

77 Տե՛ս նույն տեղում, էջ 397:

րութիւն իբր կրօնական, կրթական թէ այլ մարզերու մէջ Սարաճեան սրբազանի գործունէութեան կնիքը կը կրէ իր վրայ»⁷⁸: Հաստատվելով Կիպրոսում՝ Սարաճյան սրբազանը, ըստ էության, ստանձնել էր կղզու ազգային իշխանությունների ղեկավարումը:

Պետրոս սրբազանը մի շարք քայլեր է ձեռնարկում կղզու ազգային իշխանության նոր մարմինների ձևավորման և թեմը վերջնականապես Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո դնելու ուղղությամբ: 1923 թ. մարտին Պետրոս Սարաճյանի նախաձեռնությամբ և Ազգային սահմանադրությանը համաձայն «կիպրաբնակ ընդհանուր հայոց քուէով» Կիպրոսում ընտրվում են երկու մարմիններ, որոնցից մեկը Թաղային խորհուրդն էր՝ հինգ անդամներից բաղկացած, և Համարառու ժողովը՝ կրկին հինգ անդամներից բաղկացած: Վերջինիս վերապահված էին վերահսկիչ գործառույթներ Թաղային խորհրդի գործունէության վրա: Այդ մարմինն էր պատրաստում նաև համայնքային բյուջեն: Համարառու ժողովը գործել է մինչև 1927 թ.: Արդեն նշել ենք, որ այդ նույն թվականին Լառնակայում Պետրոս Սարաճյանի կողմից կազմավորվել էր նշանակովի թաղական խորհուրդ, որի նախագահ էր նշանակվել այդ ժամանակ Կիպրոսում հաստատված Եղիշե Եպիսկոպոս Կարոյանը⁷⁹: Վերջինս Լառնակայի թաղական խորհուրդը ղեկավարում է շուրջ ութ տարի՝ մինչև նորակազմ Լիբանանի թեմի առաջնորդ նշանակվելը:

1924 թ. մարտի 24-ին Սահակ Բ-ին հղած նամակով Պետրոս սրբազանը խնդրում է, որպեսզի կաթողիկոսը հատուկ կոնդակով հաստատի կղզու ընտրված ազգային մարմինները՝ դրանով կանխելով տարբեր ուժերի կողմից այն իրենց ձեռքը վերցնելու փորձերը: Պետրոս սրբազանը, խնդրելով Սահակ վեհափառին վավերացնել ընտրությունների արդյունքները, գրում էր. «...համարառու ժողովը, թաղական խորհուրդը և գիս հաստատող երեք հատ կոնդակ հաճիք դրկել, քանզի կը կարծեմ որ սոյն ժողովներու բարձրագոյն հոգեւոր իշխանութենէ ցարդ անվաւեր լինելը պիտի առարկեն եւ խնդիր յարուցանեն...»⁸⁰: Ընտրված մարմինների կաթողիկոսական կոնդակով հաստատումը սրբազանը հիմնավորում էր նախ այն հանգամանքով, որ Կիպրոսում հաստատված գաղթականները Կիլիկիո կաթողիկոսի «տարագիր հօտի բեկորներն են» և ուստի այդ առումով իրավասությունը պատկանում է հենց վերջինիս: Բացի դրանից՝ Պետրոս սրբազանի խոսքերով. «...Կ. Պօլսոյ պատրիարքութեան անկերպարան վիճակը եւ անստոյգ ապագան արգելք կ'ըլլան ռեւէ բանակցութեան եւ որովհետեւ ըստ Ազգային սահմանադրութեան տրամադրութեան, ռեւէ թեմի պաշտօնական մարմինք պէտք է

78 Նույն տեղում, էջ 397:

79 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,....., 2011, էջ 159, տե՛ս նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,....., էջ 54, 86:

80 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,....., էջ 96:

հոգեւոր բարձրագոյն իշխանութենէն վաւերացուին, որպէսզի ի գօրու ըլլան գործելու», կոնդակներն անհրաժեշտ էին նաև «...տեղական կառավարութեան մօտ ճանչցուելու անմիջական հարկին ներքեւ»⁸¹: Նշված նամակից պարզ է դառնում նաև, որ Պետրոս Սարաճյանը ցանկանում էր, որ կաթողիկոսը հատուկ կոնդակով իրեն հաստատի իբրև «հոգեւոր հովիւ կիպրարնակ հայոց եւ իբր ներկայացուցիչ Ձերդ վեհափառութեան»⁸²: Դրանով վերջինս ցանկանում էր լեզհիտիմացնել թե՛ իր Կիպրոսի թեմի առաջնորդ լինելու պարագան և թե՛ նորընտիր ազգային իշխանության մարմինները: Դրանով լուծվում էր երկու կարևոր հարց. նախ վերջնականապես կլուծվեր Կիպրոսի թեմի պատկանելության հարցը և երկրորդ հնարավորություն չէր տրվի այլ ուժերի, մասնավորապես քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, իրենց ձեռքը վերցնել կղզու ազգային իշխանությունները⁸³: Նույն նամակում սրբազանը, թվելով իր մատուցած ծառայություններն ու գործունեությունը, խնդրում է իրեն «ի վարձատրութիւն...արքութիւն շնորհել»⁸⁴: Արքեպիսկոպոսական աստիճանը Պետրոս Սարաճյանին իր գործունեության մեջ ավելի մեծ վստահություն կներշնչեր թե՛ իր մրցակիցների և թե՛ տեղական այլ կրոնական կառույցների հետ շփումներում:

Ընդառաջելով Պետրոս սրբազանի վերը նշված նամակին՝ 1924 թ. ապրիլի 8-ին Սահակ կաթողիկոսը հատուկ կոնդակով վավերացնում է Կիպրոսի ազգային մարմինները: Կոնդակում ասված էր. «Նկատի առեալ զանորոշութիւն վիճակին պատրիարքութեան Կ.Պօլսոյ եւ կղզւոյդ եւ գօր ըստօրէական աճումն բնակչութեան եկաւորութեամբ գաղթականաց, պարտ ու պատշաճ համարեցաք առնուլ զԿիպրոս ընդ մերով հոգեւոր իրաւասութեամբ, զի վարչական եւ կրթական մատակարարութիւնը ըստ աւանդական եւ եկեղեցական օրինաց ազգիս եւ ըստ սկզբան համարատուութեամբ առաւել եւս բարգաւաճեցի եւ առ յապա ի դժպատեհ անակնկալս ազգային ստացութիւնք յանքոյթ եւ յապահովի կացցեն մնասցեն»⁸⁵: Այս կարևոր պատմական փաստաթղթով Կիլիկիո կաթողիկոսությունը փորձում էր վերջնականապես հաստատել իր իրավասությունը Կիպրոսի թեմի վրա: Սարաճյանը կաթողիկոսին հղած պատասխան նամակում գրում է. «Կիպրոսը յետ այսու Ձերդ վեհափառութեան հոգեւոր իրաւասութեան ներքեւ է»⁸⁶: Սահակ Բ-ի նշված կոնդակի բովանդակությունը ծանուցվում է կղզու ազգային մարմիններին և ժողովրդին, ինչը ընդունվում է մեծ ոգևորությամբ: «Գոնէ Կիպրոսը Կիլիկիոյ թեմ ըրինք, այդ ալ մեզ համար մխիթարութիւն է»⁸⁷, ի-

81 Նույն տեղում, էջ 97:

82 Նույն տեղում, էջ 98:

83 Տե՛ս նույն տեղում, էջ 96:

84 Նույն տեղում, էջ 95:

85 Նույն տեղում, էջ 100:

86 Նույն տեղում, էջ 101:

87 Նույն տեղում, էջ 101:

մինչև 1927 թ. մարտ⁹⁶: Հետաքրքիր է, որ այդ վարչական մարմնի մեջ ընդգրկված չէր թեմի առաջնորդ Պետրոս Սարաձյանը⁹⁷: Կիպրոսում այդ շրջանում լույս տեսնող «Արաքս» թերթը մեծ ակնկալիքներով էր ողջունում Զավեն սրբազանի ժամանումը՝ հույս հայտնելով, որ նա կարևոր նպաստ կրերի Մելքոնյան որբանոցի կառավարման հարցում՝ միաժամանակ ստանալով Սարաձյան սրբազանի «եղբայրական աջակցությունը»⁹⁸: Սակայն իրադարձությունները լրիվ այլ կերպ զարգացան: Հաստատվելով Կիպրոսում՝ Զավեն սրբազանը հավակնություններ է ցուցաբերում ստանձնելու նաև կղզու հոգևոր առաջնորդությունը: Այդ հավակնությունները և Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանի հետ ունեցած լարված հարաբերությունները առաջ բերեցին «թեմական տագնապ մը Կիպրոսի շուրջ»⁹⁹:

Սկզբնական շրջանում, մասնավորապես 1924 թ. ընթացքում, Պետրոս Սարաձյանը բավական ակտիվ մասնակցություն ուներ Մելքոնյան որբանոցի հիմնադրման աշխատանքներին: Ավելին՝ բարերար Կարապետ Մելքոնյանը իր անունը կրող վարժարանի հիմնադրման, մասնավորապես շինության համար համապատասխան տարածքի հայթայթման և շինարարության հարցերում ցուցաբերած աջակցության համար Պետրոս Սարաձյանին նվիրում է ականակուռ լանջախաչ¹⁰⁰: Պետրոս սրբազանը իր լանջախաչը կորցրել էր Հաճնի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ:

Հետագայում, հատկապես երբ Զավեն սրբազանի հավակնությունների հետ կապված, լարվեցին երկու հոգևորականների հարաբերությունները, Պետրոս Սարաձյանը որևէ այլ առնչություն չունեցավ վարժարանի հետ կապված հարցերին:

1926 թ. փետրվարին Սահակ կաթողիկոսին Պետրոս Սարաձյանը տեղեկացնում է, որ Զավեն սրբազանը. «...չափազանց վշտացած է եղեր, որ առանց իր գիտության եւ հաւանութեան Կիպրոսի թեմը Պօլսոյ պատրիարքարանի, «այսինքն ամեն. Զուէն Ս. պատրիարքի» ձեռքէն առնուեր է եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմ հռչակուեր է»¹⁰¹: Ըստ վերջինիս՝ «Կիպրոսը յափշտակեր կամ գողացեր են Պատրիարքարանի տակնուվրայութենէն օգտուելով»¹⁰²: Նույն նամակով Պետրոս սրբազանը տեղեկաց-

96 Տե՛ս Կիլիկիոյն Բարսեղ Ա., Հայ Կիպրոս..., էջ 110, տե՛ս նաև Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի,, էջ 122-124, Մելգոնեան կրթական հաստատութիւն (համաբօստ ակնարկ), Նիկոսիա-Կիպրոս, 1957 էջ 8:

97 Մի անգամ 1924 թ. ամռանը Պետրոս արքեպ. Սարաձյանը անձամբ Կ. Մելքոնյանին հարցնում է թե ինչո՞ւ ինքը չի ներառվել Մելքոնյան որբանոցի խնամակալության կազմում, վերջինս դա բացատրում է այն հանգամանքով, որ այդ շրջանում քննարկվում էր Պետրոս սրբազանին Հավայի թեմի առաջնորդ նշանակելու հարցը: Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի,....», էջ 171:

98 «Արաքս», Լառնաբա, 1 հունվարի, 1925, N 16, էջ 3:

99 Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 285:

100 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,... էջ 203-210, տե՛ս նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի,....», էջ 91:

101 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի,....», էջ 160:

102 «Թղթակցութիւն Սահակ Բ. եւ Բարսեղ Ա. Կաթողիկոսներու», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», N 1, խմբագիր՝ Շահինեան Գ., «Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն», Անթիլիաս, 1999, էջ 73:

նում է, որ Զավեն Եղիայանին «համակիր խմբակ մը» դիմել է Ամենայն հայոց կաթողիկոսին՝ խնդրելով «իբրև իր թեմի» Կիպրոսի առաջնորդ նշանակել Զավեն սրբազանին¹⁰³: Պետրոս սրբազանը զգուշացնում է նաև, որ նման կոնդակի առկայության դեպքում իրենք պետք է այն «մերժեն»՝ միաժամանակ Սահակ կաթողիկոսից խնդրելով, որ ընդհանրական հայրապետը «անգիտակցօրէն ձախող քայլ մը չառնէ, կարծելով Կիպրոսը իր թեմն է», գրել վերջինիս և հայտնել որ. «Կիպրոսը ինչպէս ի հնումն եւ այժմ ալ 2 եւ անլի տարիներէ ի վեր Կիլիկիոյ թեմ է եւ ժողովուրդը կիլիկեցի է»¹⁰⁴:

Զավեն սրբազանը փորձում էր իր շուրջը համախմբել Սարաձյանից դժգոհներին: Սահակ կաթողիկոսը, որ տեղյակ էր կղզում ստեղծված իրավիճակին, իր հորդորներով փորձում էր մեղմացնել ստեղծված իրավիճակը. «Ձեռն փափաքիր, որ այդ խաղաղ կղզին եւ բուռ մը ժողովուրդը ներքին կեանքով Սուրիա մը դառնայ»¹⁰⁵, - գրում էր վերջինս Պետրոս սրբազանին:

1926 թ. փետրվարին Սահակ Բ-ն Պետրոս Սարաձյանին կրկին հրավիրում է իր մոտ իրեն կաթողիկոսության կազմակերպական հարցերում աջակից լինելու համար: Սակայն Պետրոս սրբազանը կրկին հրաժարվում է նախ՝ առողջության պատրվակով: Մտավախություն էր առաջացել նաև, որ Սահակ վեհափառը այդ ձևով տուրք տալով իր դեմ արված դիմումներին՝ ցանկանում է հեռացնել իրեն Կիպրոսի թեմից: Սակայն կաթողիկոսը իր հետագա նամակներում պնդում է, որ ինքը նման նպատակ չի հետապնդել¹⁰⁶:

Գնալով կրքերը Կիլիկիո թեմի շուրջ թեժանում են: Զավեն սրբազանը, թեև արդեն հեռացել էր Կիպրոսից, փորձում էր նաև իր համակիրների հետ տեղեր ձեռք բերել 1927 թ. ապրիլին նախատեսվող Թաղական խորհրդի հերթական ընտրությունների ժամանակ, որը կդյուրացներ իր հետագա պաշտոնավարումը: Նշենք նաև, որ Զավեն պատրիարքին այս հարցերում աջակցություն էր ցուցաբերում բարերար Կարապետ Մելքոնյանը¹⁰⁷: Պետրոս Սարաձյանը Սահակ Բ-ին դժգոհելով Զավեն սրբազանի գործունեությունից 1926 թ. հոկտեմբերին գրում է. «Հաստատութեան¹⁰⁸ միակ տէրը, Մելգոնեանի ոսկիներուն յենած ինձ դէմ կը յոխորտայ եւ կը սպառնայ բոլոր քուէները դրամով գնել եւ միայն իր կողմնակիցները թաղական ընտրեալ տալ, որպէսզի բացարձակ տէրն ըլլայ Կիպրոսի Ազգ. Իշխանութեան»¹⁰⁹:

Կարապետ Մելքոնյանը անգամ, ի աջակցություն Զավեն սրբազանի, նրա իսկ թելադրությամբ Պետրոս Սարաձյանի դեմ նամակներ է հղում Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փառային, Ամենայն

103 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի.....», էջ 161:

104 Նույն տեղում, էջ 161:

105 Նույն տեղում, էջ 154:

106 Տե՛ս նույն տեղում, էջ 158-159, 162-176:

107 Տե՛ս նույն տեղում, էջ 162-163:

108 Նկատի ունի Մելքոնյան որբանոցը:

109 Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի.....», էջ 184:

Հայոց կաթողիկոսին և այլոց¹¹⁰: Այդ մասին հետագայում Կարապետ Մելքոնյանն անձամբ էր խոստովանել Պետրոս սրբազանին, երբ արդեն հաշտվել էին և ունեին ջերմ հարաբերություններ¹¹¹: Կարապետ Մելքոնյանը մի քանի անգամ դիմել էր նաև Սահակ Բ-ին Պետրոս Սարաճյանին Կիպրոսից հեռացնելու խնդրանքով: Դժգոհների խմբակը բացի Ամենայն Հայոց կաթողիկոսից և Երուսաղեմի ու Պոլսոս պատրիարքներից բողոքագրեր էր հղում նաև Կիպրոսի անգլիական կառավարչին¹¹², որոշ տեղեկությունների համաձայն՝ նաև կղզու ուղղափառ արքեպիսկոպոսին և անգամ թուրք մուֆթիին¹¹³:

Նշենք սակայն, որ թե՛ 1923 թ. և թե՛ 1927 թ. ընտրություններով ձևավորված Կիպրոսի թաղական խորհրդի ներկայացուցիչները, ամբողջությամբ սատարում էին Պետրոս Սարաճյանին և դեմ էին որ ներքին պայքարի միջոցով Կիլիկիո կաթողիկոսը վերջինիս հեռացնի Կիպրոսից¹¹⁴: Թեմական խորհրդի անդամները պարբերաբար դիմում էին Սահակ Բ-ին այդ խնդրանքով՝ փորձելով փաստերով հիմնավորել իրենց ցանկությունը¹¹⁵:

1926 թ. վերջերին բարերար Կարապետ Մելքոնյանի և Զավեն սրբազանի հարաբերությունները լարվում են, որի պատճառով վերջինս թողնում է Մելքոնյան որբանոցի պաշտոնը և հեռանում է կղզուց՝ սկզբում Ալեքսանդրիա, այնուհետև իր ծննդավայր Բաղդադ¹¹⁶: Կիպրոսից հեռանալով՝ Զավեն սրբազանը հրաժարվում է Մելքոնյան վարժարանի տեսչության պաշտոնից, սակայն կարճ ժամանակ՝ ընդամենը մի քանի ամիս, շարունակում է պահպանել հաստատության խնամակալության նախագահի պաշտոնը¹¹⁷: Զավեն սրբազանի հեռանալով՝ Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված կրքերը աստիճանաբար սկսում են հանդարտվել: Սրանից հետո թեմի պատկանելության հարցը աստիճանաբար ստանում է իր հանգուցալուծումը:

«Թեմական տագնապի» հանգուցալուծման հարցում մյուս նվիրապետական աթոռներից բացի կարևոր էր նաև Մայր Աթոռի դերակատարությունը: 1926 թ. մարտի 16-ին Սահակ Բ-ն Սիրիա-Լիբանանի երուսաղեմապատկան թեմերի, ինչպես նաև Կիպրոսի թեմի հարցով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին՝ խնդրելով «տնօրինել զարժանն» և դրանով վերջ դնել «անհաճոյ խաչաձեւումներուն»¹¹⁸: Նամակում Սահակ Բ-ն ընդգծում է, որ չպետք է թույլ տրվի Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված իրա-

110 Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 288:

111 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս սրբ. Սարաճեանի,.....», էջ 213, 228-229:

112 Տե՛ս նույն տեղում, էջ 228-232:

113 Տե՛ս նույն տեղում, էջ 233:

114 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս սրբ. Սարաճեանի,.....», էջ 396-399, 403-407:

115 Տե՛ս նույն տեղում, էջ 396-400:

116 Տե՛ս նույն տեղում, էջ 188, 191, տե՛ս նաև Եղիայեան Զաւէն արքեպս., Պատրիարքական յուշերս. Կավերագիրներ եւ վկայութիւններ, «Նոր աստղ տպարան», Գահիրե, 1947, էջ 423:

117 Տե՛ս Եղիայեան Զաւէն արքեպս., նշվ. աշխ., էջ 423:

118 Տե՛ս Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 288-289:

րութեան տեսակէտով»¹²⁷: Սահակ Բ-ն այս նամակը համարում էր «պտուղ Ջաւէն Սրբազանի Կիպրոսի մէջ Կաթողիկոսական փոխանորդ հաստատելու մարմաջին»¹²⁸: Կիլիկիո ապագա աթոռակից կաթողիկոս Բաբկէն եպիսկոպոս Կյուլեսերյանը 1927 թ. Սահակ Բ-ին գրած նամակներից մեկում կարծիք էր հայտնում, որ Գերագույն հոգևոր խորհրդի միջամտությունը Կիպրոսի խնդրին «աւելորդ» է և որ հարցը պետք է լուծվի Սահակ Բ-ի և Երուսաղեմի միջև համաձայնությամբ¹²⁹:

Հետաքրքիր է, որ Գևորգ Ե-ի վերոնշյալ նամակը հայտնվում է մամուլի էջերում Խորհրդային Հայաստանում գործող խորհրդային իշխանությունների հովանավորությունը վայելող «Ազատ եկեղեցի» կազմակերպության համանուն ամսաթերթի 1927 թ. մայիս ամսվա համարում տպագրվելուց հետո¹³⁰: Նամակը վերջիններիս ձեռքն էր անցել զարտուղի ճանապարհով. ««Ազատ եկեղեցու» խլուրդները յաջողած են մուտ գործել Կաթողիկոսի դիւանատունը եւ մեզ ուղղուած նամակը ձեռք ձգել եւ հրատարակել»¹³¹, - գրում է Սահակ Բ-ն այդ մասին:

Քանի որ Ջավէն սրբազանը փորձում էր Կիպրոսի թեմը փոխանցել Երուսաղեմի հայոց պատրիարքության ենթակայության տակ, Ամենայն Հայոց կաթողիկոսը Կիպրոսի թեմի շուրջ ստեղծված վիճակի վերաբերյալ կարծիք հարցնելու նպատակով դիմել էր նաև Երուսաղեմի պատրիարքին: Վերջինս պատասխանել էր, որ լրացուցիչ հուզումների տեղիք չտալու համար լավագույն տարբերակն է չփոխել ստեղծված դրությունը, այսինքն՝ թեմը թողնել Կիլիկիո աթոռի ենթակայության տակ: Խնդրի նման լուծմանը կողմ էր նաև Պոլսո հայոց պատրիարքությունը, որը Մայր Աթոռ ուղարկած նամակում հիշեցնում էր, որ դեռևս 1914 թ. հուլիսի 30-ին Պոլսո Ազգային կենտրոնական վարչությունը Կիպրոսի թեմը հանձնել է Կիլիկիո կաթողիկոսությանը¹³²: Նշենք, նաև, որ դեռևս 1925 թ. ամռանը Երուսաղեմում Դուրյան պատրիարքի նախաձեռնությամբ և Պոլսո նախկին Ջավէն պատրիարքի և Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանի մասնակցությամբ տեղի էր ունեցել մի խորհրդակցություն, որտեղ քննարկվել էր Բեյրութի և Դամասկոսի վրա Երուսաղեմի հոգևոր իրավասության հարցը: Այս խորհրդակցության ժամանակ Ջավէն սրբազանը առաջարկել էր Բեյրութը և Դամասկոսը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը, իսկ Կիպրոսը միացնել Երուսաղեմին¹³³: Այս առաջարկի հիմքում դրվել էր այն հանգա-

127 «Ազատ 3եկեղեցի», մայիս, Եր., 1927, էջ 148, **Եղիայեան Բ.**, նշվ. աշխ., էջ 289:

128 «Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու...», էջ 88:

129 Տե՛ս նույն տեղում, էջ 90:

130 Տե՛ս «Ազատ 3եկեղեցի», մայիս, Եր., 1927, էջ 148-149:

131 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 231:

132 Տե՛ս **Չէպէան Ղ.**, նշվ. աշխ, էջ 71, տե՛ս նաև Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,, էջ 229:

133 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 134-137

1927 թ. նախատեսվող ընտրությունների առթիվ հերթական անգամ լարվեց Կիպրոսի հայության ներհամայնքային կյանքը: Պայքարը հիմնականում ընթանում էր կղզում նոր հաստատված գաղթականների և, այսպես ասած՝ տեղացիների միջև: Կղզում հաստատված չէր ազգային տուրք, որով հնարավոր կլինեք որոշել քվեարկության իրավունք ունեցողների թիվը: Քանի որ գաղթականների թիվն ավելի մեծ էր, մտավախություն կար, որ կղզու Ազգային վարչությունը կկազմվի գաղթականների ներկայացուցիչներից, ինչն էլ տեղացիների դժգոհությունը կառաջացնի՝ բերելով համայնքի պառակատման՝ դրանից բխող հետևանքներով: Ուստի թեմի առաջնորդ Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին առաջարկում է պաշտոնական հրահանգով հաստատել, որ թաղական խորհրդի հինգ անդամներից երեքը լինեն տեղացիներ, երկուսը՝ դրսեցիներ, այսինքն՝ գաղթականների ներկայացուցիչներ, որի հիման վրա էլ կկազմակերպվեն ընտրությունները¹³⁵: Սակայն դատելով Սահակ կաթողիկոսի և Պետրոս սրբազանի նամակագրությունից, նման հրահանգ չի ուղարկվում¹³⁶: Այս ընտրություններին լարվածությունը մեծացել էր նաև Ջավեն արքեպիսկոպոս Եղիայանի հավակնությունների պատճառով: Ուստի Կիպրոսի թաղական խորհրդի ընտրության հետ կապված խնդիրները հասնում են մինչև Մայր Աթոռ¹³⁷:

Կիպրոսի ազգային մարմինների կազմավորման հարցում Պետրոս սրբազանին մտահոգում էր նաև քվեարկության իրավունք ունեցողների հարցը: Հայտնի է, որ Ազգային Սահմանադրության համաձայն՝ ընտրական ձայնի իրավունք ստանում էին այն անձինք, որոնք վճարել էին նախատեսված ազգային տուրքը¹³⁸: Այդ հարցով վերջինս գրում էր Սահակ Բ-ին. «...մինակ կը փափաքէի գիտնալ թէ ի՞նչ հիման վրայ պետք է որոշել քուէ տալու իրաւունք ունեցողները, քանի ցարդ ի Կիպրոս Ազգ. տուրքի սովորութիւնը չէ եղած եւ հանդիպողը քուէ տուած է, որ արդար չէ»¹³⁹: Ի պատասխան կաթողիկոսը արտոնում է ընտրություններին ազգային տուրքի վճարման հանգամանքը հաշվի չառնել: Սակայն պետք է նախատեսվեր, որ ընտրողների տարիքը լինեք 25, իսկ ընտրվողներինը 30, վերջիններս պետք է նաև դատապարտված չլինեին¹⁴⁰:

Վերջիվերջո, կազմակերպական աշխատանքներն ավարտելուց, ընտրողների ցուցակները ձշտելուց հետո Կիպրոսի Թաղական խորհրդի ընտրությունները տեղի են ունենում 1927 թ. հունիսի 26-ին¹⁴¹: Թաղական խորհուրդը բաղկացած էր հինգ անդամներից, որոնք ընտրվում էին կղզու ողջ

135 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 203:

136 Տե՛ս նույն տեղում, էջ 205:

137 Տե՛ս նույն տեղում, էջ 205:

138 Տե՛ս «Ազգային Սահմանադրութիւն Հայոց», Կ.Պոլիս, 1914, էջ 34:

139 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 142:

140 Տե՛ս նույն տեղում, էջ 145:

141 Տե՛ս «Արաքս», Լառնաքա, մայիս-հուլիս, 1927, N 64-66, էջ 2:

հայ ազգաբնակչության կողմից չորս տարի ժամկետով: Նախապես կազմված ցուցակի համաձայն՝ ընտրական իրավունք էին ստացել 712 հայ առաքելական եկեղեցու հետևորդ կիպրահայեր: Ընտրություններին մասնակցում է 631 անձ¹⁴²: Ընտրություններին ձայնի իրավունք է ստանում «Ամէն մի ազգային, որ 2 տարի է ի վեր հաստատուած է ի Կիպրոս եւ 25 տարեկան եղած է..., իսկ քուէ առնելու իրաւունք ունին ամենաքը, որ 30 տարին լրացուած եւ ի Նիկոսիա հաստատուած են»¹⁴³: Ընտրված Թաղական խորհրդի հինգ անդամներն էին՝ Արամ Գևորգյանը (ատենապետ), որը հավաքել էր առավելագույն ձայները, Վահրամ Լևոնյանը, Հարություն Պոհձայանը, Արմենակ Ճիվելեկյանը, Նազարեթ Իրիկյանը¹⁴⁴: Պետրոս սրբազանը ընտրված Թաղական խորհրդի նոր կազմը ներկայացնում է Սահակ կաթողիկոսի հաստատմանը¹⁴⁵: Արամ Գևորգյանը դառնում է Թաղական խորհրդի ատենապետ: Ընտրվածները թեմի առաջնորդի համակրանքը վայելող թեկնածուներն էին¹⁴⁶: Նույն թվականի հոկտեմբերին կաթողիկոսը կոնդակով հաստատում է ընտրությունների արդյունքները¹⁴⁷: Ընտրություններից հետո էլ կրքերը համայնքում չեն հանդարտվում: Պետրոս սրբազանից դժգոհների խումբը պարբերաբար բողոքագրեր է հասցեագրում Սահակ կաթողիկոսին, անգամ Կիպրոսի անգլիացի կառավարչին, որը սակայն ընթացք չի տալիս այդ բողոքագրերին¹⁴⁸:

Կիպրոսի հայկական համայնքի Թաղական խորհուրդը կղզու միակ իրավասու մարմինն էր, որը բացարձակ իշխանություն ուներ «առնելու, ծախելու, շինելու են»¹⁴⁹: Թաղական խորհրդի նախագահ հանդիսանում էր թեմի առաջնորդը: Ընտրություններից հետո՝ 1927 թ. աշնանը Թաղական խորհուրդը համայնքային կյանքը կազմակերպելու համար ստեղծում կամ վերակազմակերպում է մի շարք կառույցներ: Դրանց թվում կարևոր էր Աղքատախնամ մարմնի դերը, որի խնդիրն էր միջոցներ հանգանակել և դրանցով վճարել համայնքի աղքատ հայերի տան վարձերն ու ամսական նպաստ տրամադրել¹⁵⁰: Նշենք, որ այս Աղքատախնամ մարմինը գործում էր դեռևս 1923 թվականից: Դրա անդամները ընտրվում էին Թաղական խորհրդի կողմից¹⁵¹: Վարժարանների հոգաբարձության պարտականությունն էր կազմակերպել և վերահսկել կղզու հայկական կրթական հաստատությունների գործունեությունը¹⁵²: Թաղական խորհրդի կողմից Կիպրոսի

142 Տե՛ս «Արև», Չափրե, 18 հոկտեմբերի, N 2639, 1927, էջ 1:

143 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,.....», էջ 441:

144 Տե՛ս «Արաքս», Լառնաքա, մայիս-հուլիս, 1927, N 64-66, էջ 2:

145 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,.....», էջ 207:

146 Տե՛ս նույն տեղում, էջ 208:

147 Տե՛ս նույն տեղում, էջ 223:

148 Տե՛ս նույն տեղում, էջ 223, 226:

149 Նույն տեղում, էջ 223, 224:

150 Տե՛ս նույն տեղում, էջ 444:

151 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,....., էջ 194:

152 Տե՛ս նույն տեղում, էջ 441-442:

երկրորդ խոշոր քաղաքի՝ Լառնակայի, համայնքային կյանքը կազմակերպելու՝ «մատրան եւ վարժարանի գործերու հսկողութեան» համար նշանակված էր «Յանձնախումբ մը», որը ևս կոչվում էր Թաղական խորհուրդ՝ իր համապատասխան մարմիններով¹⁵³: Լառնակայի նշանակովի Թաղական խորհուրդը գործում էր 1923 թվականից:

1931 թ. հունիսի վերջին լրանում էր Կիպրոսի Թաղական խորհրդի ժամկետը, ուստի Պետրոս Սարաձյանը Սահակ կաթողիկոսին առաջարկում է թույլատրել կազմակերպել նոր ընտրություններ և կղզում ստեղծել Թեմական ժողով՝ Թաղային խորհրդի փոխարեն¹⁵⁴: Ազգային սահմանադրության դրույթների համաձայն՝ ազգային մարմիններ կազմավորելու հարցը դեռ 1920-ական թթ. սկզբներից մտահոգում էր Կիպրոսի հայկական համայնքին¹⁵⁵: Կաթողիկոսը տալիս է իր համաձայնությունը թեմական ժողով կազմելու վերաբերյալ¹⁵⁶: Կիպրոսի համայնքային կյանքի կազմակերպման տեսանկյունից կարևոր էր նաև կանոնադրություն ունենալը, որն անհրաժեշտ էր պատրաստել մինչ թեմական ժողովի ընտրությունները: Թեմի առաջնորդ Պետրոս սրբազանը, նկատի ունենալով Կիպրոսի համայնքի առանձնահատկությունները և այն հանգամանքը, որ «Ազգային սահմանադրությունը կարելի չէ կէտ առ կէտ գործադրել հոս» ամբողջացրել և 1926 թ. Սահակ Բ-ի քննությանն ու հաստատմանն էր ներկայացրել դեռևս 1907 թ. պատրաստված Կիպրոսի «յատուկ մասնատր կանոնագրութիւն»¹⁵⁷: Սույն կանոնադրության նախագիծը ըստ էության բխում էր տեղական առանձնահատկություններից, ուստի դրանով կապահովեր կղզու ազգային իշխանությունների համակարգված և արդյունավետ գործունեությունը՝ միաժամանակ նախատեսելով հայոց եկեղեցու, տվյալ դեպքում Կիպրոսի թեմի, պատշաճ մասնակցությունը ազգային կյանքին¹⁵⁸: Սակայն նոր կանոնադրության վերջնական մշակումն ու հաստատումը տեղի ունեցավ մի քանի տարի անց:

1931 թ. Կիպրոսի Թաղական խորհուրդը Հալեպում գումարվելիք եպիսկոպոսական ժողովին ներկայացրած տեղեկագրում հերթական անգամ անդրադառնում է կանոնադրություն ունենալու անհրաժեշտությանը՝ հիմնավորելով, որ կղզու հայ բնակչությունը գաղթականների հաստատվելուց հետո նախկին 4-5 հարյուրի փոխարեն դարձել է 3-4 հազար, ուստի այլևս նպատակահարմար չէ հայ համայնքը կառավարել հինգ հոգանոց

153 Տե՛ս նույն տեղում, էջ 442:

154 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի.....», էջ 310:

155 Տե՛ս «Արաքս», Լառնաքա, 16 հուլիսի, 1926, N 52-53, էջ 1, 16 օգոստոսի, 1926, N 54-55, էջ 1:

156 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի.....», էջ 311:

157 Նշենք, որ 1907 թ. պատրաստված Կիպրոսի «Սահմանադրական կանոնագրութիւնը» Կիլիկիո կաթողիկոսի քննությանն էր հանձնված դեռևս Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, սակայն հետագա իրադարձությունները թույլ չէին տվել գործընթացն ավարտին հասցնել, տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի.....», էջ 386:

158 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի.....», էջ 224:

Թաղական խորհրդով: Դրա փոխարեն առաջարկվում էր Կիպրոսի թեմի համար հաստատել կանոնադրություն և թեմական ժողով Ազգային Սահմանադրությամբ նախատեսված Գավառական ժողովի իրավասությանը համապատասխան¹⁵⁹: Արդեն 1932 թ. հունվարի 12-ին Սահակ Բ-ի կողմից հաստատվում է Կիպրոսի Թեմական ժողովի 25 հոդվածից բաղկացած կանոնադրությունը¹⁶⁰: Թեմական ժողովը բաղկացած էր լինելու 11 անդամներից՝ 9 աշխարհական և 2 հոգևորական: Աշխարհականներն ընտրվելու էին գաղտնի քվեարկությամբ կիպրահայ գաղութի կողմից, իսկ հոգևորական անդամներին անմիջապես նշանակելու էր թեմի առաջնորդը: Թեմական ժողովի գործունեության ժամկետը 8 տարի էր: Թեմական ժողովը ընտրելու էր թեմի առաջնորդին և «ազգային գործերու մատակարարութիւն ընելու» համար «նիկոսիաբնակ ազգայիններէ» Վարչական ժողով, որը կազմված էր լինելու 5 անդամներից, 4 տարի ժամկետով¹⁶¹: Թեմի առաջնորդը հանդիսանում էր թաղական ժողովի, վարչական ժողովի և «անկէ բղխած ժողովներու» նախագահը¹⁶²: Ընտրության արդյունքները վավերացվում էին Կիլիկիո կաթողիկոսի կողմից: Ընտրական ձայնի իրավունք էր տրվում Կիպրոսում երկու տարի և ավելի հաստատված ազգայիններին, որոնց տարիքը 25 էր և վճարել էին ազգային տուրք: Ընտրվելու իրավունք ունեին 30 տարին լրացած կիպրահայերը: Ընտրական ձայնի իրավունքից զրկվում էին այն անձինք, որոնք «...յիմար են, ազգային գործերու մէջ զեղծումով մը ամբաստանուած եւ կամ դատապարտուած են ազգային ժողովոյ մը կողմէ եւ կամ տեղական դատարաններու կողմէ...»¹⁶³:

Վարչական ժողովը համայնքի կյանքը կազմակերպելու համար նախկինի նման ստեղծում էր մի շարք մարմիններ՝ Եկեղեցու հոգաբարձություն, վարժարանների հոգաբարձություն, Աղքատախնամ մարմին, տնօրինում էր համայնքի ֆինանսները՝ թաղական ժողովի հաստատած բյուջեի համաձայն¹⁶⁴:

Սահակ կաթողիկոսի համապատասխան թույլտվության հիման վրա¹⁶⁵ Կիպրոսի թեմում 1932 թ. փետրվարին տեղի են ունենում թեմական ժողովի ընտրություններ: Նորընտիր թեմական ժողովի կազմը ներկայացվում է Սահակ Բ-ին հաստատման համար, որն էլ շուտով կոնդակով հաստատում է դա¹⁶⁶: Թեմական ժողովի ընտրություններին հերթական անգամ Արամ Գևորգյանը հավաքել էր ամենաշատ քվեները¹⁶⁷: 1932 թ. մարտին էլ թեմա-

159 Տե՛ս նույն տեղում, էջ 451-452:

160 Տե՛ս նույն տեղում, էջ 460-463:

161 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 316-317, 460-461:

162 Տե՛ս նույն տեղում, էջ 463:

163 Նույն տեղում, էջ 461:

164 Տե՛ս նույն տեղում, էջ 462:

165 Տե՛ս նույն տեղում, էջ 316-317:

166 Տե՛ս նույն տեղում, էջ 324, 326, 328-329, տե՛ս նաև «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ...», էջ 219-222:

167 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 326:

կան ժողովը ընտրում է վարչական ժողովի հինգ անդամներին¹⁶⁸: Նշենք նաև, որ 1942 թ. պատրաստվում և երկու տարի անց Կիլիկիո կաթողիկոսության կողմից հաստատվում է կիպրահայության նոր կանոնադրությունը՝ 104 հոդվածներից բաղկացած¹⁶⁹:

Նոր կանոնադրության ընդունումով և դրա հիման վրա ազգային իշխանության նոր մարմինների ձևավորումով, կարելի է ասել, ավարտվում է Կիպրոսի հայկական համայնքի վերակազմավորման գործընթացը:

Սփյուռքի համայնքներում խիստ կարևոր հարց էր ազգային տուրքի հավաքագրումը: Կիպրոսում 1920-ական թթ. դեռևս ներդրված չէր ազգային տուրքի հավաքագրման համակարգ և այդ ուղղությամբ Սահակ կաթողիկոսը պարբերաբար հորդորներ էր հղում թեմի պատասխանատուներին: Մինչ ազգային տուրքի հաստատումը Սահակ կաթողիկոսը թեմի առաջնորդին կոչ էր անում կենտրոնի, այսինքն՝ Անթիլիասի հետ կապերն ավելի ամրապնդելու համար «յանուն Ս. Լուսաուրչայ գանձանակներ հաստատուին» Կիպրոսի թեմերի եկեղեցիների մեջ¹⁷⁰: Գանձանակի հաստատումը ձգձգվում էր, ինչի համար կաթողիկոսը հաճախ հանդիմանում էր Պետրոս սրբազանին՝ ընդգծելով, որ կիպրահայ համայնքը փոքրաթիվ է, բայց «ամենէն հանգիստ հայ գաղթականություն» է, սակայն վերջինիս կողմից հանգանակություն ի նպաստ Անթիլիասի չէր կատարվում¹⁷¹: 1932 թ. Կիպրոսի թեմական ժողովը որոշում է տարեկան թեմական տուրք սահմանել հոգուտ Անթիլիասի՝ միաժամանակ դեռևս նպատակահարմար չգտնելով գանձանակի տեղադրումը¹⁷²:

Կիպրոսի թեմի 1932 թ. հաստատված կանոնադրության հոդված 3-ի Ջ կետով սահմանվում էր ազգային տուրք, որը մինչ այդ, ինչպես նշել ենք, կիպրահայության շրջանում չէր կիրառվում: «Կիպրոսի ազգայիններուն իւրաքանչիւրին կարողութեան համեմատ տարեկան տուրք մը պարտադրել եւ միեւնոյն ժամանակ կաթողիկոսարանի թեմական տուրքը սահմանել»¹⁷³, նշված էր կանոնադրության հիշյալ կետում: Կիպրոսի հայկական համայնքում ազգային տուրքի ամրագրումը կարևոր քայլ էր համայնքային կյանքի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից: Սահակ կաթողիկոսը 1932 թ. Կիպրոսի թեմական ժողովի արդյունքները հաստատող կոնդակում հերթական անգամ անդրադառնում է Կիպրոսի թեմում ազգային տուրք սահմանելու հարցին¹⁷⁴: Երկու տարի անց՝ 1934 թ. հունվարի 1-ին Սահակ Բ-ն, հատուկ շրջաբերականով դիմելով իրեն ենթակա թեմերի հայությանը, հորդորում է

168 Տե՛ս նույն տեղում, էջ 334:

169 Տե՛ս **Չէպէյան Ղ.**, նշվ. աշխ, էջ 89:

170 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,.....», էջ 328:

171 Տե՛ս նույն տեղում, էջ 337, 339:

172 Տե՛ս նույն տեղում, էջ 340:

173 Նույն տեղում, էջ 460:

174 Տե՛ս նույն տեղում, էջ 329:

«Իւրաքանչիւրը իր քսակին, իր արժանապատուութեան եւ իր գիտակցութեան տարողութեամբ ու չափով» մասնակից դառնալ Ազգային տուրքի տրամադրմանը¹⁷⁵: «Այս տուրքը ո՛չ միայն խղճմտանքի հարկ մըն է քեզի համար, այլ նաեւ օրինական պարտք մը, զոր եթէ կատարես կը շինես իրաւունք մը աստոր փոխարէն, այսինքն ազգային գործերուն մասնակցելու, խօսելու, զանոնք գնահատելու կամ քննադատելու իրաւունքը»¹⁷⁶: Ազգային տուրքի տրամադրումը, ըստ էության, կամավոր էր: Սակայն դրա արդյունավետ և համակարգված հավաքագրումից էին մեծապես կախված համայնքային կյանքի արդյունավետ կազմակերպումն ու իշխանության ազգային մարմինների գործունեությունը: Այդ պատճառով էլ սփյուռքացման ճանապարհին անցնող հայկական համայնքները դեռևս Ազգային սահմանադրության մեջ ամրագրված ազգային տուրքի գաղափարը վերաձևակերպելով, կրկին կիրառության մեջ դրեցին: **Ազգային տուրքը ազգային պատասխանատվության, ազգային գործերում իրավունք վաստակելու, չձուլվելու և Սփյուռք դառնալու ձգտումների գործնական դրսևորում էր:**

Այսպիսով, 1920-ական թթ. Կիպրոսի հայոց թեմի վարչական ենթակայության հարցի կարգավորմանը զուգընթաց թեմի պատասխանատուների, մասնավորապես թեմակալ առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի հետևողական ջանքերի շնորհիվ աստիճանաբար վերաձևավորվում և վերակազմավորվում են Կիպրոսի ազգային իշխանության մարմինները, որոնք կարևոր դեր են խաղում կիպրահայության հասարակական-քաղաքական, կրթական-մշակութային կյանքում և հայապահպանության գործում:

4. Կիպրոսի ազգային մարմինների հարաբերությունները անգլիական իշխանությունների և տեղացի հույների հետ

Հաստատվելով Կիպրոսում՝ հայերը փորձում էին ինտեգրվել տեղի հասարակական, տնտեսական, մշակութային կյանքին, լավ հարաբերություններ պահպանել տեղական իշխանությունների հետ՝ միաժամանակ ձգտելով կազմակերպելու սեփական համայնքային կյանքը և ջանքեր գործադրելու հայապահպանության ուղղությամբ: Այդ առումով յուրահատուկ իրավիճակ էր ստեղծվել Կիպրոսում: Հայտնի է, որ կղզին քննարկվող ժամանակաշրջանում գտնվում էր անգլիական ենթակայության տակ, իսկ կղզու հիմնական բնակչությունը հույներ էին, որոնք ձգտում էին միանալ Հունաստանին: Կղզում նաև մեծ թվով թուրք բնակչություն կար: Ստեղծված իրավիճակում հայերը փորձում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատել թե՛

175 Տե՛ս նույն տեղում, էջ 464:
176 Նույն տեղում, էջ 464:

անգլիական իշխանությունների և թե՛ հույների ու կղզում բնակվող մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ: Պետրոս սրբազանին հաջողվել էր բավականին ջերմ հարաբերություններ հաստատել Կիպրոսի անգլիական իշխանությունների հետ¹⁷⁷, ինչը շատ կարևոր հանգամանք էր ոչ միայն գաղթականներին տեղավորելու, այլ նաև համայնքային խնդիրներն արդյունավետ լուծելու համար: Այդ ջերմ հարաբերությունների մեկ ապացույցն է 1928 թ. Կիպրոսի անգլիացի կառավարիչ Ռոնալդ Սթորոսի նամակը Սահակ Բ-ին, որով անգլիացի կուսակալը հավաստիացնում էր, որ կիպրաբնակ հայերը տեղի իշխանությունների համար «ոեւէ բեռ մը չեն» և ընդհակառակը վերջիններս Կիպրոսի «թէ՛ օգտակար եւ թէ՛ պատուաւոր անդամներն են»¹⁷⁸:

Սարաճյան սրբազանը փորձում էր լավ հարաբերություններ հաստատել նաև Կիպրոսի հույների, մասնավորապես վերջիններիս հոգևոր իշխանությունների հետ: 1921 թ. հուլիսին վերջինս այցելում է Կիպրոսի հույն արքեպիսկոպոսին՝ շնորհավորելու այդ օրերին հույն-թուրքական ընթացող պատերազմում¹⁷⁹ հույների՝ թուրքերի դեմ տարած հաղթանակների առթիվ: Հույն պատրիարքը փոխայցով այցելում է Պետրոս սրբազանին, որով վերսկսվում են երկու եկեղեցիների փոխայցելություններն ու շփումները Կիպրոսում, որը. «...6-7 տարիէ ի վեր դադրած է եղեր»¹⁸⁰: Նշենք, որ Կիպրոսի հունական եկեղեցին իր արքեպիսկոպոսի գլխավորությամբ, անկախ էր մյուս հունական ուղղափառ պատրիարքություններից¹⁸¹:

Սակայն տեղացի հույների հետ հարաբերությունները միշտ չէ որ հարթ էին ընթանում:

1925 թ. թագավորական հատուկ հրովարտակով Կիպրոսը հռչակվում է անգլիական գաղութ և Մեծ Բրիտանիայի անբաժան մաս: Կղզին այսուհետ ունենալու էր իր սահմանադրությունը, օրենսդիր և գործադիր մարմինները¹⁸²: Այդ որոշմանը դեմ էին Կիպրոսի հույները, որոնք ձգտում էին միավորվելու Հունաստանին: Տեղի հունական արքեպիսկոպոսը այս որոշման դեմ բողոքագիր է ուղարկում Լոնդոն, սակայն ստացված պաշտոնական պատասխանում անգլիացիները հայտնում էին, որ կղզին Հունաստանին միավորելու հարցը վերջնականապես փակված է¹⁸³:

Ահա այս հողի վրա Կիպրոսի հույները որոշակի մտավախություններ են ունենում հայ գաղթականների թվի աճի հետ կապված: Հայերը կղզում կարող էին անգլիացիների համար դառնալ որոշակի հենարան ի հակադրություն հույների՝ Հունաստանին միանալու ձգտումների: Այդ պատճառով

177 Տե՛ս նույն տեղում, էջ 190-192, 399:

178 Նույն տեղում, էջ 408:

179 1919 թ. մայիսի 15-ից պատերազմ էր բռնկվել Հունաստանի և Թուրքիայի միջև, որը շարունակվեց մինչև 1922 թ. հոկտեմբերի 11-ը:

180 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 44:

181 Տե՛ս **Բակուրյան**, նշվ. աշխ., էջ 17:

182 Տե՛ս «Արաքս», Լառնաքա, 1 մայիսի, 1925, N 24, էջ 1, 1 հունիսի, 1925, N 26, էջ 3:

183 Տե՛ս նույն տեղում, 16 հունիսի, 1925, N 27, էջ 4:

բարեկամական հարաբերությունները հույների և հայերի միջև երբեմն լարվում էին: Պետրոս սրբազանի վկայությամբ՝ կղզու հույները այնքան էլ գոհ չէին Կիպրոսում հայերի հաստատումից. «Կիպրացի յոյները 10 տարիներ է ի վեր շարունակ պաշտօնական եւ անպաշտօն յայտարարութիւններ կ'ընեն կիպրաբնակ հայ գաղութին դէմ, դեռ երկու ամիս առաջ հայկական վտանգի մասին կը գրէին եւ Մելգոնեան հաստատութիւնը¹⁸⁴ պիծակի բոյն կ'անուանէին եւ վերջին յունական պատուիրակութիւնը ի միջի այլոց կը պահանջէ, որ կառավարական հայ պաշտօնեաներու քանակը զեղչուի եւն եւն»¹⁸⁵, - հայտնում էր Պետրոս Սարաճյանը՝ ավելացնելով նաև, որ «կիպրացի յոյները չափազանց մոլեռանդ եւ շովեն են»¹⁸⁶:

Հարաբերությունները հույների հետ հատկապես սրվեցին 1920-ական թթ. վերջին մի իրադարձության պատճառով: 1929 թ. սեպտեմբերին հունական հերթական պատվիրակությունն է մեկնում Լոնդոն՝ կղզին Հունաստանին հանձնելու հարցը կենտրոնական իշխանությունների առջև բարձրացնելու համար: Կիպրոսի անգլիական իշխանությունները կղզու ազգային փոքրամասնություններից՝ թուրքերից, հայերից և մարոնիներից, պահանջում են «մասնավոր դիմումներ» անեն ի պաշտպանություն կղզին անգլիական ենթակայության թողնելուն: Կիպրոսի հայկական ազգային իշխանությունները՝ թեմի առաջնորդ Պետրոս Սարաճյանի գլխավորությամբ մի քանի անգամ՝ 1923, 1928, 1929 թթ., նման դիմումներ են ներկայացնում անգլիական իշխանություններին: Նշենք, որ նույն դիրքորոշումն ունեին նաև կղզու մյուս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները¹⁸⁷: Այդ դիմումները կատարվել են գաղտնի՝ չսրելու համար հարաբերությունները հույների հետ: Անկախ այն հանգամանքից՝ հայերը դեմ էին թե կողմ Կիպրոսը Հունաստանին հանձնելուն, հայկական ազգային իշխանությունները բացահայտ չէին կարող մերժել անգլիական իշխանությունների նման պահանջները, հատկապես այն պարագայում, որ Կիպրոսի գաղթական հայերը, ընդհանուր առմամբ, դժգոհ չէին կղզու անգլիական իշխանությունների վերաբերմունքից: Հանգամանքների բերումով 1929 թ. Կիպրոսի հայկական Թաղական խորհրդի՝ անգլիացիներին ներկայացրած հերթական դիմումի մասին տեղեկանում են հույները¹⁸⁸ և այդ մասին հայտնում իրենց թերթերում, որը որոշակի հակահայ տրամադրությունների տեղիք է տալիս: Կղզու անգլիացի կուսակալ Ռոնալդ Սթորսի հավաստմամբ այդ տեղեկության արտահոսքը կառավարական շրջանակներից չէր եղել¹⁸⁹: Այդ լուրը հույների շրջանում դժգոհություններ և հակահայ տրամադրություններ է առաջացնում: Ստեղծված

184 Խոսքը Կիպրոսի Մելգոնյան վարժարանի մասին է:

185 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,.....», էջ 274:

186 Լույն տեղում, էջ 286:

187 Տե՛ս Alexander-Michael Hadjilyra, The Armenians of Cyprus,....., 2009, էջ 16.

188 Տե՛ս նույն տեղում, էջ 273:

189 Տե՛ս նույն տեղում, էջ 274:

իրավիճակում անհրաժեշտ էր ցուցաբերել ձկունություն և չվնասել հայկական շահերը: Մի կողմից կարևոր էր կղզու հույների և առիթ չտալ հակահայ տրամադրությունների, մյուս կողմից էլ չստեղծել անվստահության մթնոլորտ անգլիական իշխանությունների մոտ: Կղզու հայ հասարակությունը, նաև բարերար Կարապետ Մելքոնյանը, Թաղական խորհրդից և Պետրոս սրբազանից պահանջում են պաշտոնական հերքում: Վերջիններս ժողովրդին հանդարտեցնելու համար բերանացի ժխտում են նման դիմումի գոյությունը՝ միաժամանակ խուսափելով պաշտոնական հերքում հրապարակելուց: Սակայն շուտով՝ 1929 թ. հոկտեմբերին, հունական թերթերում հայերի կողմից հայտնվում է «առանց ստորագրության հերքում», որով հույները որոշակի «գոհացան»¹⁹⁰:

Սահակ կաթողիկոսը ստեղծված իրավիճակում խորհուրդ էր տալիս առավելագույն զգուշություն ցուցաբերել՝ հասկանալով, որ եթե նման դիմումների պահանջը գալիս է անգլիական իշխանություններից, ապա մերժել դրանց անհնար է, միաժամանակ հորդորելով՝ չնոռանալ, որ Անգլիայից առավել Հունաստանն է «եղբայրական գուրգուրանք» ցույց տվել տարագիր հայերին¹⁹¹: Ուստի նա գտնում էր, որ առավել «խոհական» է «փափկութեամբ ձեռնպահ» մնալը նման իրավիճակներում: Միաժամանակ, կաթողիկոսը մտահոգություն էր հայտնում, որ հույների շրջանում հակահայ տրամադրությունների առկայության պարագայում, եթե հանկարծ. «Աստուած մի արասցէ, յարափոփոխ դիւանագիտութեամբ Անգղիան քաշուի Կիպրոսէն, հայերը չպիտի կարողանան այդ տեղ ապրիլ, պէտք է զգուշանանք անգոյն ու անհոգի դիւանագիտութեան խաղերէն»¹⁹²:

Ի պատասխան Սահակ կաթողիկոսի մտահոգությունների՝ Պետրոս սրբազանը հայտնում էր, որ ստիպված ընդամաջել են կառավարության պահանջին և հայտնվել նման իրավիճակում. «...երկունքն ալ սիրաշահիլ կարելի չէր, մին կամ միւսը պէտք էին վշտացնել, եւ որովհետեւ անմիջական տիրող անգլիական կառավարութիւնն է գաղթականներն ներս ընդունողը եւ անոնց բարեացակամ գտնուողը նոյն կառավարութիւնն էր, ուստի պէտք էինք ստորագրել»¹⁹³, - գրում էր սրբազանը՝ միաժամանակ հերքելով կաթողիկոսի այն տեղեկությունը թե հույների մասսայական բոյկոտի պատճառով հայերը գործազուրկ են դարձել և համայնքը խնդիրների առջև է կանգնած:

Կիպրոսի հունական թերթերը շարունակում էին հակահայ նյութեր հրապարակել՝ սլաքներն ուղղելով թեմի առաջնորդ Պետրոս սրբազանի դեմ՝ վերջինիս մեղադրելով անգլիացիներին հղված դիմումը հեղինակելու հար-

190 Տե՛ս նույն տեղում, էջ 274:

191 Տե՛ս նույն տեղում, էջ 280:

192 Նույն տեղում, էջ 280:

193 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի,....», էջ 282:

ցում¹⁹⁴: Սահակ Բ-ն կարծում էր, որ Պետրոս սրբազանը «ղիվանագիտական խաղի մը» գոհ է դարձել և ստեղծված լարվածությունը մեղմելու համար վերջինիս հորդորում էր հայտարարությամբ հանդես գալ. «Յունաստանի թերթերը գէշ կ'արտայայտուին ընդի. Հայերու դէմ եւ իրավունք ունին, որովհետեւ իսկապէս եղբայրական ընդունելութիւն մը ըրին խուճապահար հայերուն եւ մինչեւ այսօր մօտ 50 հազար կ'ասպանջակեն»¹⁹⁵, - գրում էր կաթողիկոսը:

Կիպրոսի հույների դժգոհություններն ավելացել էին հատկապես այն լուրերից հետո, թե իբր առաջիկայում Հունաստանից անգլիացիների անջակցությամբ 15-20 հազար հայեր են հաստատվելու կղզում¹⁹⁶: Դրա հետ կապված իր դժգոհությունն է հայտնում նաև Կիպրոսի հույների մետրոպոլիտը¹⁹⁷: Սակայն այդ լուրը պաշտոնապես հերքում է կղզու կառավարիչ Սթորսը՝ ի պատասխան Կիպրոսի հույն արքեպիսկոպոսի հարցման¹⁹⁸: Որոշակի ջանքերից հետո կրքերը հանդարտվում են, բայց վերջնականապես չեն մարում:

Նշենք, որ հակահայ տրամադրություններ էին տարածվում նաև կղզու թուրքական համայնքի ներկայացուցիչների և վերջինիս պատկանող թերթերի կողմից¹⁹⁹:

Հայերի նկատմամբ հարգանքի և Կիպրոսի հայոց թեմի առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանի ունեցած հեղինակության մասին են խոսում ոչ միայն վերջինիս լավ հարաբերությունները տեղական անգլիական իշխանությունների և կղզու մյուս համայնքների ներկայացուցիչների հետ, այլ նաև այն, որ Կիպրոս այցելած պատվիրակությունները, պաշտոնատար անձինք, որպես կանոն, հանդիպումներ էին ունենում նրա հետ:

Այսպես, 1925 թ. հուլիսին Ազգային առաջնորդարան է այցելում Կիպրոսում հաստատված Հիջազի նախկին թագավոր, Մեքքայի Շերիֆ Մելիք Հուսեյնը: Այս այցը հաջորդել էր Պետրոս սրբազանի թագավորին կատարած այցին: Այցի առթիվ կազմակերպվում է հանդիսավոր ընդունելություն, իսկ պատվավոր հյուրը 50 անգլիական ոսկի է նվիրում առաջնորդարանին²⁰⁰: Թագավորի հետ Պետրոս սրբազանը հաստատում է մտերմիկ հարաբերություններ: Հետագայում հանդիպումները և փոխայցելությունները շարունակվում են²⁰¹: Հաջորդ տարի նոյեմբերին Նիկոսիայի առաջնորդարան է այցելում և մեծ պատիվներով ընդունելության արժանանում Անդրիորդանանի թագավոր Էմիր Աբդալլահը, որը Մեքքայի Շերիֆ Հուսեյնի որդին էր: Այցի

194 Տե՛ս նույն տեղում, էջ 281, 285:

195 Նույն տեղում, էջ 285:

196 Տե՛ս «Արև», Գաիիրտ, 27 հունվարի, N 3340, 1930, էջ 1:

197 Տե՛ս «Ժամանակ», Կ.Պոլիս, 31 հունվարի, N 7062, 1930:

198 Տե՛ս նույն տեղում, էջ 286:

199 Տե՛ս «Արաքս», Լառնաքա, 1 սեպտեմբերի, 1924, N 8, էջ 3:

200 Տե՛ս նույն տեղում, 16 հուլիսի, 1925, N 29, էջ 3-4:

201 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,..., էջ 278-279:

ընթացքում թագավորը դրվատանքի խոսքեր է ասում հայերի հասցեին՝ ընդգծելով, որ եթե հայերը ցանկանան հաստատվել իր երկրում, ապա իր երկրի դռները բաց են²⁰²: 1927 թ. օգոստոսին էլ նման այցելություն է կատարում և Պետրոս սրբազանի հետ տեսակցում Իրաքի Ֆեյսալ թագավորը²⁰³: Նմանատիպ այցերը պարբերաբար կրկնվում էին: Թեմի առաջնորդն էլ, օգտագործելով նման առիթները, հեղինակավոր հյուրերի առջև պարբերաբար բարձրացնում էր հայությանը հուզող հարցերը:

Ահա այսպիսի դժվար ու բարդ պայմաններում էին հայերը հաստատվում հյուրընկալ երկրներում՝ ձգտելով կազմակերպելու իրենց համայնքային կյանքը՝ միաժամանակ փորձելով չհայտնվել հակամարտող տարբեր ուժերի միջև, լավ հարաբերություններ հաստատել տեղական իշխանությունների և ազդեցիկ շրջանակների հետ հանուն սեփական շահերի:

Եզրակացություններ

Կիլիկիան լքելուց հետո Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսությունը բախվեց նոր մարտահրավերների, որոնք անգամ սպառնալիք դարձան կաթողիկոսության գոյության համար: 1920–1930–ական թվականներին կաթողիկոսության բարձրաստիճան հոգևորականների, մասնավորապես կաթողիկոս Սահակ Բ Խապայանի ահռելի ջանքերի շնորհիվ Կիլիկիո աթոռը նոր պայմաններում վերակազմության գործընթաց անցավ: Այդ ճանապարհին խիստ կարևոր էր նոր թեմերի ստեղծումը:

Տարագրությունից հետո Կիլիկիո կաթողիկոսությունը կորցրել էր իր բոլոր թեմերը՝ բացի Հալեպի թեմից, որը շարունակում էր մնալ իր ենթակայության ներքո: Սիրիա–Լիբանանում հաստատվելուց հետո, մինչ երուսաղեմապատկան թեմերի՝ Կիլիկիո աթոռին փոխանցվելը, առաջին թեմը, որը 1920–ական թթ. կեսերին անցավ Կիլիկիո կաթողիկոսության վարչական իրավասության ներքո, Կիպրոսի թեմն էր: Այս գործընթացում մեծ դերակատարում ունեցավ թեմի առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանը, որի համառ ջանքերով էր պայմանավորված Կիպրոսի թեմի պատկանելության հստակեցումը: Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանը Կիպրոսի թեմի վերակազմության և վերահաստատման համար գրեթե արեց նույնը ինչը Կիլիկիո աթոռի համար իրականացրեց վեհափառ Սահակ Բ Խապայանը:

Դիտարկելով Կիպրոս կղզում կիլիկիահայության հաստատման, Կիպրոսի հայոց թեմի վերակառուցման և վերջինիս ջանքերով տեղի հայկական համայնքի վերակազմակերպման ընթացքը՝ բացահայտում ենք Հայոց ցեղասպանությունից հետո հայկական համայնքների առջև ծառայած մար-

202 Տե՛ս «Արաքս», Լառնաքա, նոյեմբեր, 1926, N 58, էջ 4:

203 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,..., էջ 280:

տահրավերները և դրանց հաղթահարման ուղիները, որոնք նման և ինչ-որ իմաստով ընդհանուր էին հայկական համայնքների համար:

Կիպրոսի թեմի օրինակով պարզ է դառնում նաև հայկական Սփյուռքի ձևավորման այն դժվարին ու բարդ ուղին, որ հաղթահարում էին սփյուռքացման գործընթացն անցնող հայ գաղթականները ցեղասպանությունից հետո:

Ուսումնասիրելով արխիվային վավերագրերն ու հրապարակված հարուստ նյութերը՝ տեսնում ենք, որը 1920-ականների սկզբներից սկսած հիմնականում կիլիկիահայ գաղթականության ներթափանցման հետևանքով Կիպրոս կղզում ձևավորվեցին նոր իրողություններ: Կիլիկիայությունն իր թվային գերակշռության հաշվին աստիճանաբար սկսեց թելադրող դառնալ համայնքային կյանքում: Կիպրոսի հայոց թեմի նախաձեռնությամբ և Ազգային սահմանադրության դրույթներին համապատասխան՝ կղզում ձևավորվեցին ազգային իշխանության նոր մարմիններ, մշակվեց և Սահակ Բ-ի կողմից հաստատվեց համայնքի կանոնադրությունը: Աստիճանաբար Կիպրոսի գլխավոր քաղաքներում սկսեցին կազմավորվել և գործել համայնքային այլ կառույցներ՝ դպրոցներ, մշակութային միություններ, սկսեցին տպագրվել թերթեր և այլն: Այս ջանքերը նախ և առաջ միտված էին համայնքային կյանքի կազմակերպմանն ու գաղթականության առջև ծառայած բազում խնդիրների լուծմանը, որոնց թվում առանցքային էր հայապահպանության խնդիրը:

Ստեղծված նոր պայմաններում տրամաբանական էր Կիպրոսի հայոց թեմի կարգավիճակի հստակեցումը՝ հոգևոր-վարչական ենթակայության տեսակետից: Դեռ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը սկսված գործընթացը նոր իրավիճակում իր շարունակությունը ստացավ 1920-ական թթ.: Ծավալված լարված պայքարի արդյունքում 1920-ական թթ. կեսերին խնդիրը ստացավ իր տրամաբանական հանգուցալուծումը՝ Կիպրոսի հայոց թեմն անցավ Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության ներքո:

Նոր վերակազմավորված Կիպրոսի հայոց թեմը հսկայական դերակատարություն ունեցավ և մինչ այժմ ունի տեղի հայության համայնքային կյանքի կազմակերպման և հայապահպանության գործում:

Էլ. հասցե - hovhannisyanedgar@yahoo.com

Էդգար Գ. Հովհաննիսյան - ունի ավելի քան երեսուն գիտական հրապարակումներ: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայկական Սփյուռքի, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների, հայկական հոգևոր-կրոնական կառույցների գործունեության հարցերը: Զբաղվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 20-րդ դարի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

Summary

THE SETTLEMENT OF THE ARMENIANS OF CILICIA IN CYPRUS

and the reconstruction of the armenian diocese of cyprus in 1920-1930s

Edgar G. Hovhannisyan

Candidate of Sciences in History

Key words - The Catholicosate of the Great House of Cilicia, Antelias, Dprevank, Armenian Diaspora, Armenian Diocese of Cyprus, Sahak II Khabayan, Archbishop Petros Sarajyan, Armenian refugees, preservation of the Armenian identity.

The first mentions about Armenians in Cyprus date back to the 6th-7th centuries. During the reign of the Armenian Catholicos Gregory IV at the end of the 12th century the Armenian Diocese of Cyprus was mentioned for the first time. In the following centuries, Cyprus became one of the most important cultural and spiritual centers of the Armenians.

After the genocide, the image of the Armenians of Cyprus completely changed. The number of Armenians in Cyprus was not large before the Armenian Genocide. Several thousand Armenians displaced from a number of settlements of Cilicia and Western Armenia took refuge on the island of Cyprus. However, many Armenian refugees did not find favorable living conditions on the island and left for other countries. In the 1920s and 1930s, the number of Armenians in Cyprus fluctuated between 3,500-4,000.

The Armenian Diocese of Cyprus was mainly under the jurisdiction of the Holy See of Cilicia of the Armenian Church. However, at different times it was also subordinated to the Armenian Patriarchate of Jerusalem and the Armenian Patriarchate of Constantinople. After the Armenian Genocide, the reconstruction of the Armenian Diocese of Cyprus was very important for organizing the community life of the Armenians of Cyprus. It was also very important to clarify the status of the Diocese of Cyprus in terms of subordination. It is worth to mention, that after leaving Cilicia, the Catholicosate of Cilicia lost all its dioceses except the Diocese of Aleppo. A number of obstacles appeared in that process. After a persistent struggle, the problem was finally resolved in the mid-1920s and the Diocese of Cyprus came under the jurisdiction of the Catholicosate of Cilicia. The Diocese of Cyprus became the first reconstructed diocese of the Catholicosate of Cilicia.

After all this, the Armenian Diocese of Cyprus made enormous efforts to organize the community life of the Armenian refugees who settled in Cyprus and to

preserve their national identity. The Primate of the Diocese, Archbishop Petros Sarajyan, played a huge role in this issue. He led the Diocese of Cyprus for about twenty years from 1920 until 1940, until he was elected the Catholicos of the Cilician See.

Резюме

ПОСЕЛЕНИЕ КИЛИКИЙСКИХ АРМЯН НА КИПРЕ

И восстановление армянской епархии Кипра в 1920-1930-е гг.

Эдгар Г. Оганнесян

Канд. ист. наук

Ключевые слова - католикосат Великого Дома Киликийского, Антилиас, Дпреванк, армянская диаспора, армянская епархия Кипра, Саак II Хапаян, Петрос архиепископ Сараджян, армянские беженцы, сохранение армянской идентичности.

Первые упоминания об армянах на Кипре относятся к VI-VII векам. Во время правления армянского католикоса Григория IV в конце XII века армянская епархия Кипра упоминается впервые. В последующие века Кипр стал одним из важнейших культурных и духовных центров армян Восточного Средиземноморья.

После Геноцида армян в Османской империи община кипрских армян полностью изменилась. До геноцида число армян на Кипре было небольшим. Несколько тысяч армян, перемещенных из ряда населенных пунктов Киликии и Западной Армении, нашли убежище на острове Кипр. Однако многие армянские беженцы не нашли на острове благоприятных условий жизни и уехали в другие страны. В 1920-1930-е годы численность армян на Кипре колебалась в пределах 3500-4000 человек.

Армянская епархия Кипра находилась в основном под юрисдикцией Святого престола Киликийской армянской церкви. Однако в разное время она также была подчинена Иерусалимскому патриархату и Константинопольскому патриархату. После Геноцида армян восстановление Киликийской епархии Кипра имело большое значение для организации общинной жизни кипрских армян. Поэтому было очень важно уточнить статус Кипрской епархии с точки зрения подчиненности.

Стоит отметить, что после ухода из Киликии Киликийский католикосат потерял все свои епархии, кроме Алеппской. В этом процессе возник целый ряд препятствий. После упорной борьбы проблема была окончательно реше-

на в середине 1920-х годов, и Кипрская епархия перешла под юрисдикцию Киликийского католикосата. Кипрская епархия стала первой реконструированной епархией Киликийского католикосата.

После всего этого армянская епархия Кипра приложила огромные усилия для организации общинной жизни армянских беженцев, осевших на Кипре, и сохранения их национальной идентичности. Огромную роль в этом вопросе сыграл предстоятель епархии архиепископ Петрос Сараджян. Он возглавлял Кипрскую епархию около двадцати лет – с 1920 по 1940 год, пока не был избран католикосом Киликийского престола.

REFERENCES

1. “Adanayi vkanerë ev Surb Step’anos vkayaranë, 1909 Larnaka”, khmbagir` **Varuzhan ark’episkopos**, Nikosia, 2010 (**In Armenian**).
2. **Akinean N.**, Hay Kipros, Handës Amsõreay, Hayagitakan usumnat’ert’, N 6-8, humis-ogostos, Vienna, 1937 (**In Armenian**).
3. **Alpoyachean A.**, Kipros kghzin, T’ eodik, Amenun taret’s’oy s’, Pariz, 1927 (**In Armenian**).
4. Azgayin Sahmanadrut’iwn Hayots’, “Artsiv zhoghovrdakan gravacharanots’i”, K. Polis, 1914 (**In Armenian**).
5. **Bakuran**, Kipros kghzi, tparan Azgayin-krt’aran vorbanots’i”, Nikosia, 1903(**In Armenian**).
6. **Ch’elëpean Kh.**, Yishatakaran kiprahay gaghuti, tparan Kat’oghikosut’ean Hayots’ Metsi Tann Kilikioy, Antilias-Libanan, 1955 (**In Armenian**).
7. E tareshrjani, “Tparan Azgayin-krt’aran vorbanots’i”, Nikosia, 1902 (**In Armenian**).
8. Hay sp’yurk’ hanragitaran, Yer., “Haykakan hanragitaran” hrat., 2003 (**In Armenian**).
9. “Kiprosi t’emi hovuakan kargë ev t’emakan kazmavorumë”, “Hratarakutiwn Azgayin ishkhanut’ean”, khmbagir` **Varuzhan ark’episkopos**, Nikosia-Kipros, 2011 (**In Armenian**).
10. **Kiwlësërean Babgën A.**, Hay Kipros. Hay gaghutë ev S. Makar, Ant’ilias-Libanan, 1936 (**In Armenian**).
11. **Kiwlësërean Babgën A.**, Patmut’iwn kat’oghikosats’ Kilikioy (1441-ën minch’ew mer õrerë), Ant’ilias, tparan Kat’oghikosut’ean Hayots’ Metsi Tann Kilikioy, Antilias, 1990 (**In Armenian**).
12. Suriyoy erusaghëmapatkan t’emerun Kilikioy Kat’oghikosut’ean p’okhants’umë, Yerusaghëm, 1930 (**In Armenian**).
13. Taragrut’iwn, vorber, Melgonean hastatut’iwn, “Dar” himnadram”, khmbagir` **Varuzhan ark’episkopos**, Nikosia-Kipros, 2011 (**In Armenian**).
14. T’ght’akts’ut’iwn Sahak B. ew Babgën A. kat’oghikosneru, “Kilikioy kat’oghikosut’ean arkhivner”, N 1, khmbagir` **Shahinean G.**, Ant’ilias, tparan Kat’oghikosut’ean Hayots’ Metsi Tann Kilikioy, 1999 (**In Armenian**).
15. T’ght’akts’ut’iwn Sahak B. kat’oghikosi ew Petros ark’. Saracheani, “Haykakan matenashar Galust Gyulbenkyan himnarkut’yan”, 2010, “Kilikioy kat’oghikosut’ean arkhivner”, N 3, khmbagir` **Varuzhan ark’episkopos**, Nikosia-Kipros, “Haykakan matenashar Galust Kiwlpenkean himnarkut’ean”, 2010 (**In Armenian**).
16. Ts’uts’ak hayerën dzeragrats’ Nikosiayi i Kipros, kazmets’ **Akinean h. Nersës**, Mkhitarean tparan, Vienna, 1961 (**In Armenian**).
17. **Yeghiayean B.**, Zhamanakakits’ patmut’iwn Kat’oghikosut’ean Hayots’ Kilikioy 1914-1972, Ant’ilias, tparan Kat’oghikosut’ean Hayots’ Metsi Tann Kilikioy, 1975 (**In Armenian**).
18. **Yeghiayean Z.** ark’episkopos, Patriark’akan yushers: vaveragirner ew vkayutiwnner, Gahirë, “Nor astgh” tparan, 1947 (**In Armenian**).